

Վ.Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԳՈՐԾՈՂ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏ

«ՏՆՄԵՏԱԳԵՄ»

# Երևան - 2007

## Բովանդակություն

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1 Հարկերի կազմակերպման հիմունքները

1.1 Հարկերի էությունը և տնտեսական նշանակությունը

1.2 ՀՀ հարկային համակարգի ձևավորման օրենսդրական հիմքերը

1.3 Հարկերի դասակարգման սկզբունքները

Գլուխ 2 ՀՀ-ում կիրառվող ուղղակի հարկերի էությունը  
և գանձման կարգը

2.1 Շահութահարկ

2.2 Եկամտահարկ

2.3 Հողի հարկ

2.4 Գույքահարկ

Խնդիրներ և թեստեր

Օգտագործված գրականություն

## Ներածություն

Անցումային շրջանում նոր ձևավորված տնտեսական, ֆինանսական, հարկային հարաբերությունները և դրանցից բխող հիմնական բարեփոխումները որոշակի առումով նպաստեցին հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում առաջացած հակասությունների հաղթահարմանը, հանգեցրին շուկայական կառույցների աստիճանական ձևավորմանն ու տարբեր ոլորտների գծով նոր ռազմավարության մշակմանը:

Ընդհանուր ֆինանսական համակարգում առանձնահատուկ տեղ ունեն հարկերը, որոնք ծառայում են որպես պետության գոյատևման և կայունացման հիմք և արտացոլում են կազմակերպությունների, բնակչության ու պետության միջև առաջացած հարաբերությունները:

Անկախ երկրի զարգացվածության մակարդակից, քաղաքական կառուցվածքից հարկերը համարվում են տնտեսության առողջացման, կայունացման ու զարգացման համար կարևոր միջոց, որոնք հանդես են գալիս հարկման սկզբունքների, հարկադրույքների, հարկման օբյեկտների, հարկման բազաների, հարկային արտոնությունների և այլ ձևերով:

Հարկերին և հարկային համակարգին առնչվող հարցերը եղել և մնում են տնտեսագետների ուշադրության կենտրոնում, որոնց վերաբերող հարցերն իրենց արժեքավորումն են ստացել Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոյի, Ջ. Քեյնսի, Ա. Լաֆերի, Ջ. Ստիգլիցի, Դ. Չերնիկի ինչպես նաև անվանի հայ տնտեսագետների հետազոտությունները:

Հայաստանի հանրապետության հարկային համակարգը ձևավորվել է 1991-1995թթ., և կարճ ժամանակահատվածում, ելնելով ազատ շուկայական հարաբերությունների պահանջներից, մշակվել և հղկվել է, ապահովելով անկախ զարգացման ուղին բռնած հանրապետության ներքին և արտաքին ֆունկցիաների իրականացումը:

Հանրապետության հարկային օրենսդրության հիմնաքարը հանդիսանում է «Հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է հարկային համակարգի կառուցվածքը, նրա միասնականությունը, հարկերի հասկացությունը, տեսակները հարկման օբյեկտները և սուբյեկտները, նրանց իրավունքները և պարտականությունները:

Ուղղակի հարկերը հանդիսանում են որպես հարկային համակարգի բաղկացուցիչ մաս, տնտեսական, ֆինանսական քաղաքականության կարևոր գործիքներ, որոնք անուղղակի հարկերի հետ միասին որոշիչ դեր են կատարում տնտեսական, սոցիալական, ֆինանսական հարաբերությունների հետագա զարգացման գործում և դիտվում են տնտեսված ֆինանսական միջոցների արդարացի բաշխման ու վերաբաշխման գործընթացը կարգավորող հիմնական լծակներ և բյուջեի եկամուտների ավելացման կարևոր գործոն:

Շուկայական տնտեսության անցումային փուլում ընտրված հարկային համակարգը արդյունավետ կգործի, եթե տնտեսական, ֆինանսական և հարկային քաղաքականությունը բխեցվի հարկադրման տեսությունների առաջավոր փորձից, ընտրված առավել առաջադիմական հարկային դրույթաչափերի սանդղակի մակարդակից, ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցությունից:

## Գլուխ 1 Հարկերի կազմակերպման հիմունքները

### 1.1 Հարկերի էությունը և տնտեսական նշանակությունը

Հարկերը պատմականորեն առաջացել են հասարակության սոցիալական խմբերի ու պետության ծագման հետ միաժամանակ: Դա նշանակում է, որ «հարկ» հասկացության արմատները ընկած են դարերի խորքում և մարմնավորում են այն բոլոր արժեքավոր հիմնադրույթները, որոնք ամբողջական տեսքով արտահայտում են այդ կարևոր երևույթի ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ու քաղաքական օրինաչափությունները:

Այդ օրինաչափությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկերը պետության եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրն են և գոյատևման հիմքը: Այս առումով, չենք բաժանում նախկին Խորհրդային Միության տնտեսագետների այն տեսակետը, ըստ որի հարկը շուկայական տնտեսություն ունեցող երկրների համար դիտարկվում էր որպես դասակարգային կատեգորիա, որը կոչված էր ապահովելու տիրող դասակարգի քաղաքական գերիշխանությունը:

Իրականում հարկը ոչ թե դասակարգային, այլև տնտեսական, ֆինանսական կատեգորիա է՝ արտահայտում է հարկային հարաբերություններ և ներկայացնում ֆինանսական հարաբերությունների բաղկացուցիչ մաս, անկախ տնտեսավարման ձևից:

Հարկային հարաբերությունների զարգացման փուլերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի:

Առաջին փուլն իր մեջ ընդգրկում է հին աշխարհի և միջին դարերի տնտեսավարման համակարգերը, բնութագրվում է հարկերի զարգացման ցածր աստիճանով և ինչ որ տեղ մաս պատահական բնույթով: Զարգացման այդ փուլում հարկերը գոյություն ունեին չհամակարգված վճարումների տեսքով և առավելապես կրում էին բնամթերային բնույթ, հարկահավաքությունը հիմնականում կատարվում էր ելնելով տվյալ պահի հասարակական պահանջմունքներից: Հին Հունաստանում, մ.թ.ա. VII-VI դարերում, գործում էր եկամտի 1/10 կամ 1/20 չափով հարկի հանձնման մեխանիզմը: Ստացված միջոցները ծախսվում էին վարձկանների բանակի պահպանման, եկեղեցիների,

ճանապարհների ու ջրամբարների կառուցման, զանազան այլ հասարակական կարիքների համար<sup>1</sup>:

Առաջին կազմակերպված հարկային համակարգերից մեկը, որի շատ առանցքային տարրեր իրենց արտացոլումն են գտել ժամանակակից հարկային հարաբերություններում, Հին Հռոմի հարկային համակարգն էր: Հռոմի քաղաքացիները հարկեր էին վճարում իրենց կարողությանը համապատասխան ընտանեկան դրության և գույքային վիճակի մասին հայտարարության հիման վրա: Վերջինս, ըստ էության, կարելի է դիտարկել որպես ներկայումս գործող եկամտային հայտարարագրի նախատիպը:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց հարկերը աստիճանաբար սկսեցին կրել դրամական բնույթ և դարձան պետության եկամուտների հիմնական աղբյուր: Պետությունների զարգացումը օբյեկտիվորեն պահանջում էր «պատահական» հարկերի փոխարեն կայուն, արդյունավետ և հիմնավորված հարկային համակարգի ձևավորում: Հատկապես XVII-XVIII դարերում սկսվեց հարկման զարգացման երկրորդ փուլը: Հենց այդ ժամանակահատվածից հարկերը սկսեցին հանդիսանալ երկրի բյուջեի եկամտային մասի հիմնական աղբյուրը: Նշված ժամանակահատվածում սկսվեց հարկային առաջին համակարգերի ձևավորումը, որոնք իրենց մեջ ներառում էին ուղղակի և անուղղակի հարկեր: Հատկապես կարևոր դեր էին խաղում ակցիզները, ինչպես նաև ըստ եկամուտների և շնչի գանձվող հարկերը: Հատկանշական է այն, որ Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո 1791թվականից բյուջեն և հարկերը սկսեցին հաստատվել պառլամենտի կողմից: Այս փուլում հարկերը վերածվեցին պետական եկամուտների առանցքային և կանոնադրված աղբյուրի, ինչն էլ ավելի ուշ ամերիկյան հայտնի քաղաքական և պետական գործիչ Բ. Ֆրանկլինին ստիպեց հայտարարելու, որ հարկ վճարել և մահանալ պարտավոր է յուրաքանչյուր ոք, դրանով իսկ, հարկային պարտավորությունը, ի սկզբանե հանդիսանալով հասարակական երևույթ, սկսեց դիտվել նույն հարթությունում, ինչ բնության օրենքները:

Հարկման զարգացման երրորդ փուլը սկսվում է XIX դարից, երբ լայն զարգացում ստացավ մեքենայական արտադրությունը: Այս փուլը բնութագրվում է հարկատեսակների քանակի կրճատմամբ և դրանք սահմանող ու գանձող մարմինների իրավասությունների հստակեցմամբ:

---

<sup>1</sup> Налоги. Учебное пособие, под ред. Д.Г.Черника, М., <Финансы и статистика>, 2001.ст.5

Հարկման զարգացմանը զուգընթաց, սկսեց ձևավորվել հարկման գիտական տեսությունը, որի հիմնադիր է հանդիսանում Ա. Սմիթը: «Բնության և ժողովուրդների հարստության պատճառների մասին» աշխատության մեջ նա առաջին անգամ ձևակերպել է հարկման սկզբունքները, տվել հարկային վճարումների սահմանումը, նշել դրանց տեղը երկրի ֆինանսական համակարգում, ինչպես նաև սահմանել, որ հարկերը հարկատուի համար ազատության, և ոչ թե ստրկության ցուցանիշ է»<sup>1</sup>:

Հասարակության մեջ, ֆինանսական գիտության զարգացմանը զուգընթաց տեղի ունեցավ հարկման բնույթի, խնդիրների և մեթոդների նկատմամբ տեսական-գիտական հայացքների կայացումը: Ոչ մի տնտեսագիտական դպրոց, ինչպես նաև ֆինանսական տեսություն չի շրջանցել հարկման խնդիրը: 19-րդ դարի երկրորդ կեսում շատ պետություններ քայլեր ձեռնարկեցին գիտական ձեռքբերումները իրական կյանքում կիրառելու յամար: Սակայն, ինչպես նշում է ռուս տեսաբան Վ. Պուլշկարեվան «ֆինանսական գիտության զագաթնակետը առաջին համաշխարհային պատերազմից հետո իրականցված հարկային բարեփոխումներն էին, որոնք ամբողջությամբ հիմնավորված էին հարկման գիտական սկզբունքներով: Եվ հենց այս ժամանակ դրվեցին ժամանակակից հարկային համակարգի կառուցվածքային հիմքերը, որում ուղղակի հարկերը և առաջին հերթին պրոգրեսիվ եկամտահարկը զբաղեցրին առաջատար դիրք»<sup>2</sup>:

Հարկերը պետության կազմավորման և հասարակական պահանջմունքների բավարման նպատակով պարտադիր և միակողմանի կատարվող վճարներ են: Այդ մուտքերից պետությունը կատարում է ծախսումներ հասարակական այնպիսի բարիքների ստեղծման վրա, որոնք անհատները կամ անհատների խմբերը ոչ մի պարագայում սեփական միջոցներով և ինքնակամ չեն ստեղծի:

Զնայած առաջին հայացքից կարող է թվալ, որ «հարկ» կատեգորիան բավականաչափ լավ ուսումնասիրված է, այնուհանդերձ տնտեսագետների շրջանում դեռևս շարունակվում են դրա առավել և ընդգրկուն բնորոշման շուրջ գիտական բանավեճերը:

Հարկերի ծագման և դրանց մասին առաջին հիշատակման վերաբերյալ հարցը միանշանակ չէ: Տնտեսագիտական դպրոցները տալիս են տարբեր մեկնաբանություններ և տարեթվեր:

---

<sup>1</sup> Смит А. Исследование о природе и причинах богатства народов. М.: ОГИЗ Соцэкгиз, 1935, т. 2.

<sup>2</sup> Пушкарева В. История финансовой мысли и политика налогов. М.: 1996 ст.74

Հարկերի տնտեսական էությունն առաջին անգամ ուսումնասիրվել է Դավիդ Ռիկարդոյի աշխատություններում: Ըստ նրա տեսակետի «Հարկը կազմում է նոր ստեղծված ապրանքի ու աշխատանքի այն բաժինը, որը գտնվում է կառավարության տրամադրության տակ, և այն միշտ վճարվում է, վերջին հաշվով, կապիտալից կամ երկրի եկամտից<sup>1</sup>:

Հարկերի էությունը և հասարակության տնտեսական համակարգում դրանց դերի մասին պատկերացումները հասարակական զարգացմանը համընթաց անընդհատ փոփոխվել են: Ընդ որում, սկզբնական շրջանում հարկը հանդես էր գալիս հիմնականում որպես տնտեսական հասկացություն: Այսպես, վաղ ֆեոդալական պետություններում հարկը դիտվում էր որպես նվեր պետության գլխավորին: Պատահական չէ, որ անգլերենում միջին դարերում «հարկ» և «նվեր» հասկացությունները հանդես են եկել գրեթե որպես հոմանիշներ և նշանակվել են մեկ ընդհանուր «gift» բառով: Հետագայում հարկը սկսեց ընկալվել որպես բնակչության կողմից պետությանը տրված օգնություն: Օրինակ, մինչ այժմ գերմաներենում հարկի անվանումը «steuer» բառը թարգմանվում է որպես աջակցություն, լումա:

Սակայն 18-րդ դարում վերջնականապես ձևավորվեց պատկերացումն այն մասին, որ հարկն ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև իրավական բովանդակություն: Հենց այս շրջանում հարկը սկսեց դիտարկվել որպես պետության առջև քաղաքացիների իրավական պարտականություն: Այսպես, անգլերենում որոշ հարկերի անվանում են «duty», այսինքն պարտք, պարտականություն, ֆրանսերենում «import», ինչը նշանակում է հարկադիր վճարում:

Հասրակական գիտակցության մեջ հարկերի անհրաժեշտության և կարևորության մասին պատկերացումների արմատավորմանը զուգընթաց հարկային մեխանիզմների հանգամանալից ուսումնասիրման ու դրա հիման վրա համապատասխան հարկման տեսության մշակման հիմնախնդիրն աստիճանաբար արդիական դարձավ տարբեր ժամանակների առաջատար տնտեսագետների համար: Արդյունքում ի հայտ եկան հարկերի ընդհանուր տեսությունները, որոնցից ***առաջինը փոխանակման տեսությունն է:***

Ըստ այս տեսության, հարկի միջոցով քաղաքացիները արտաքին հարձակումներից պաշտպանության, ներքին կարգուկանոնի ապահովման ծառայություններ են գնում պետությունից: Այս տեսությունը կիրառելի էր միայն միջին դարերում, երբ երբ տուրքերի դիմաց գնվում էր ռազմական և

---

<sup>1</sup> Ридарко Д. Начало политэкономии и налогового обложения. Т.1, М.: Политиздат, 1955, ст, 360



իրավական պաշտպանություն, այսինքն այս տեսությունը այդ ժամանակ գոյություն ունեցող հարաբերությունների արտացոլումն էր:

Փոխանակության տեսության տարատեսակ է ատոմիստական տեսությունը, որը ձևավորվել է լուսավորության դարաշրջանում: Դրա վառ ներկայացուցիչներից էին ֆրանսիացի Ս. դը Վոբանը և Շ. Մոնտեսքյոն: Ըստ այս տեսության, հարկը պետության և քաղաքացիների միջև պայմանգրի արդյունք է, որի համաձայն քաղաքացին վճարում է պետությանը իր պաշտպանության և այլ ծառայությունների համար:

18-րդ դարի առաջին կեսում շվեյցարացի տնտեսագետ Ժ. դը Սիսմոնդին «Քաղաքատնտեսության նոր սկզբունքներ» աշխատանքում ձևակերպել է հարկերի **վայելքի տեսությունը**, ըստ որի հարկը այն գինն է, որը քաղաքացին վճարում է հասարակությունից ստացվող վայելքների դիմաց, այսինքն քաղաքացին հարկի վճարման դիմաց վայելում է հասարակական կարգուկանոնը, արդարադատությունը, սեփականության պաշտպանությունը և այլն:

Այս նույն ժամանակաշրջանում ձևավորվում է նաև հարկի՝ որպես **ապահովագրական պարզևի տեսությունը**, որի ներկայացուցիչներն էին ֆրանսիացի պետական գործիչ Ադոլֆ Տիերը և անգլիացի տնտեսագետ Ջոն Մակ-Կուլուխը: Նրանց կարծիքով հարկը ապահովագրավճար է, որով քաղաքացիները փորձում են իրենց ապահովագրել որոշ ռիսկերից՝ պատերազմներից, հրդեհներից, գողություններից և այլն:

**Չարկերի դասական տեսությունները:** Չարկերի մասին առավել ամբողջական տեսության ստեղծմանը լուրջ ուշադրություն դարձվեց 18-րդ դարի երկրորդ կեսին, երբ հայտնի շոտլանդացի տնտեսագետ և փիլիսոփա Ադամ Սմիթի կողմից 1776թ. հրապարակված «Ոսումնասիրություն ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին» աշխատությունում մանրակրկիտ ներկայացվեց հարկային քաղաքականությունը և, մասնավորապես, հարկերի էությունը՝ որպես տնտեսագիտության բաղկացուցիչ: Այստեղ նա իրավացիորեն շեշտադրում է, որ «պետության հպատակները պետք է իրենց հնարավորյանը, ունակությանը և կարողությանը համապատասխան մասնակցեն կառավարության պահպանմանը, այսինքն այն եկամտին համապատասխան, որից նրանք օգտվում են պետության հովանավորության և պաշտպանության ներքո: Յուրաքանչյուր անձին մոծեելու պարտադրվող հարկը պիտի որոշված լինի ճշգրտորեն, առանց որևէ կամայականության: Վճարելու ժամկետն ու եղանակը, դրա գումարը պիտի պարզ ու որոշակի լինի վճարողի և ամեն մի այլ անձի համար: Այնտեղ, որտեղ դա

չկա, տվյալ հարկով հարկվող յուրաքանչյուր անհատը այս կամ այն չափով հանձնվում է հարկահավաքի իշխանությանը, որը կարող է իր համար անցանկալի վճարողի հարկը ծանրացնել կամ էլ ծանրացման սպառնալիքով իր համար ներառել նվեր կամ կաշառք<sup>1</sup>:

Վերը նշվածի հետ միաժամանակ Սմիթը հավելում է, որ պետական ծախսումները իրենց բնույթով անարտադրողական են, ուստի անհրաժեշտ է դրանք կրճատել, քանի որ պետական ծախսումներով արդյունավետ վատնվում է ստեղծված արդյունքը և զսպվում արտադրողական ուժերի զարգացումը: Սմիթի կողմից ներկայացված հիմնադրույթները հետագայում հաստատվեցին Դ. Ռիկարդոյի կողմից, որը 1817թ. հրապարակված «Քաղաքատնտեսության և հարկման սկզբունքները» աշխատությունում, ելնելով իր կողմից մշակված արժեքի աշխատանքային և դրա վրա հիմնված բաշխման տեսություններից, ընդգծում է, որ բոլոր հարկերն էլ այս կամ այն կերպ ազդում են կապիտալի և եկամտի վրա: Ընդ որում, եթե որպես հարկման օբյեկտը է հանդես գալիս կապիտալը, ապա արդյունքում նվազում են արտադրողական ուժերի վերարտադրության համար նախատեսված ռեսուրսները, իսկ եկամտի հարկման պարագայում տեղի է ունենում հարկատուի սպառման ծավալների նվազում:

Շուկայական տնտեսության համակարգում հարկերի եւության և պետության ու հասարակության համար դրանց նշանակության բավականաչափ ծավալուն հետազոտություն է արվել նաև Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից, որոնք արդյունքում հանգեցին այն մտքին, որ հարկերն աշխատավոր դասակարգի համար հանդիսանում են մեծագույն չարիք և լրացուցիչ շահագործման լծակ: Մյուս կողմից, նրանք կարևորում էին հարկերի առանցքային դերը շուկայական տնտեսությունում և ընդգծում էին հատկապես ուղղակի հարկերի նշանակությունը՝ առավել առաջադիմական համարելով եկամտահարկով հարկումը, իսկ անուղղակի հարկերը դիտարկելով որպես ծանր և անարդյունավետ<sup>2</sup>:

Կարևոր է նշել նաև դասականի հակադրություն հանդիսացող քեյնսյան տեսության մասին, որը հիմնադրվել է անգլիացի մեծանուն տնտեսագետ Ջ.Մ. Քեյնսի և նրա հետևորդների մշակումների վրա: Քեյնսյան հայեցակարգի հիմքում դրված էր արդյունավետ պահանջարկի և վճարունակության ընդլայնման

---

<sup>1</sup> Смит А. Исследование о природе и приинах богатства народов. М.: ОГИЗ Соцэкгиз, 1935, т. 2, с. 337-338

<sup>2</sup> Маркс К., Энгельс Ф. Сочинения, 2-е издание, т. 7, с. 83

գաղափարը, որի ելակետային հիմնադրույթներից էր ցածր եկամուտների ազատումը եկամտահարկից, իսկ միջին և բարձր եկամուտների հարկումը պրոգրեսիվ սանդղակով<sup>1</sup> :

Քեյնսի մոտեցմամբ, եթե խնդիր է դրվում աշխուժացնելու տնտեսական կյանքն ու ընդլայնելու վճարունակ պահանջարկը և սպառումը, ապա ցածր եկամուտների դեպքում պետք է հարկումը բացառվի կամ էլ իրականացվի ցածր դրույքաչափերով, քանի որ այս պարագայում սպառման սահմանային հարկումը բարձր է, ուստի և եկամտահարկի ցածր դրույքաչափերի կիրառումը կբերի տնօրինվող եկամտի և վճարունակ պահանջարկի ընդլայնմանը, սպառման ծավալների ավելացմանը և հետևաբար արտադրության խթանմանը:

***Սոցիալիզմի հարկային տեսությունը*** առաջադրվել է 1950-ական թթ. և հիմնվում է փողի քանակական տեսության վրա: Դրա հեղինակ Մ.Ֆրիդմանի կարծիքով տնտեսության կարգավորումը կարող է իրականացվել դրամաշրջանառության միջոցով, որը կախված է փողի քանակությունից և բանկային տոկոսից: Դրա հետ միասին հարկերին չի տրվում այն կարևորությունը, ինչ քեյնսյան դրույթներում: Տվյալ դեպքում հարկերը այս մեխանիզմների շարքում ներգործում են դրամական շրջանառության վրա, մասնավորապես հարկերի միջոցով շրջանառությունից դուրս է բերվում ավելցուկային դրամական զանգվածը:


Սոցիալիզմի և քեյնսյան տեսություններում հարկերը նվազեցնում են տնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոնների դերը: Եթե առաջին դեպքում որպես այդպիսի գործոն դիտարկվում է ավելցուկային դրամական զանգվածը, ապա երկրորդում ավելցուկային խնայողությունները<sup>2</sup>: Այդ նույն ժամանակաշրջանում աստիճանաբար սկսեց կազմավորվել և տնտեսական հարաբերությունների համակարգում իր կարևոր տեղը գտավ շահույթի հարկման տեսությունը: Այդ կապակցությամբ կարևոր է նշել, որ մինչև 20-րդ դարի 70-ական թվականները շահութահարկի բարձր դրույքաչափերի կիրառումը միաժամանակ զուգակցվում էր տարատեսակ հարկային արտոնությունների տրամադրմամբ, ինչը նպատակաուղղված էր տնտեսության գերակա ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների և խթանների ստեղծմանը: 1970-1980-ական թվականներին արևմտյան զարգացած երկրներում կազմավորվեց հարկային հարաբերություններին առնչվող մեկ այլ տեսական

---

<sup>1</sup> Кейнс Дж. Общая теория занятости, процента и денег. М.: Прогресс, 1978, с. 332-333

<sup>2</sup> Усоскин В. Теории денег. М., 1976, глава 3

մոտեցում, որի հիման վրա կատուցվեցին կիրառական հարկային քաղաքականության հիմնադրույթները<sup>1</sup>: Դրանում, մասնավորապես, առաջնահերթ դեր խաղաց «առաջարկի տնտեսագիտության» սկանավոր ներկայացուցիչ, ամերիկացի տնտեսագետ Լաֆերի տեսությունը, որի առանցքային գաղափարն ու գործիքը հարկային դրույթաչափերի և պետության հարկային մուտքերի միջև կախվածությունն արտացոլող կորն է (տես գծապատկեր 1.1.1):



Գծապատկեր 1.1.1 Լաֆերի կորը

Լաֆերի կորի հիմքում դրված է այն գաղափարը, որ միջինացված միասնական հարկի զրոյական և 100 տոկոսանոց դրույթաչափի դեպքում պետության հարկային եկամուտները հավասար են զրոյի: Յարկային միջինացված դրույթաչափի աճը, 0 մեկնարկային կետից սկսած, հանգեցնում է հարկային եկամուտների ավելացմանը, իսկ առավելագույն մուտքերին

<sup>1</sup> Федосов В.М. Современный капитализм и налги. 1987, ст.107

համապատասխանող օպտիմալ դրույքաչափերից սկսած հարկային եկամուտները աստիճանաբար նվազում են՝ ընդհուպ մինչև գրոյական մակարդակ:

Հարկերին վերաբերող տեսությունների մեջ մեծ ավանդ ունեն նաև ռուսական դպրոցի ներկայացուցիչները՝ մասնավորապես Ն. Տուզենևի կարծիքով, հարկերը հասարակության համար միջոցներ են որևէ նպատակի հասնելու համար, այսինքն, այն նպատակի, որ մարդիկ ենթադրում են իրենց համար հասարակությանը միանալու ժամանակ, կամ պետություններ ձևավորելիս: Դրա վրա էլ հիմնվում է ժողովրդից տուրքեր պահանջելու պետության իրավունքը<sup>1</sup>:

Ըստ Ա. Տրիվուսի, հարկն իրենից ներկայացնում է վճարողի նյութական բարիքների որոշ քանակի ստիպողական գանձում՝ առանց համապատասխան կամ համարժեք փոխհատուցման: Ա. Սոկոլովը հիմնավորում է այն տեսակետը, որ հարկի տակ պետք է ենթադրել ստիպողական այն տուրքը, որը գանձվում է պետական իշխանության կողմից տնտեսավարող առանձին անձանցից կամ տնտեսություններից իր ծախսերը ծածկելու կամ տնտեսական քաղաքականության որևէ խնդիրներ լուծելու համար: Եթե համենատելու լինենք նշված երկու հեղինակների ցուցաբերած մոտեցումները, ապա կտեսնենք, որ ի տարբերություն Ա. Տրիվուսի բնութագրման, Ա. Սոկոլովի բնութագրումը առավել ամբողջական է արտահայտում հարկերի բուն էությունը, քանի որ այն նշում է, որ հարկերը անմիջականորեն ֆիսկալ գործառույթ կատարելու հետ մեկտեղ կարող են ծառայել տնտեսական քաղաքականության կոնկրետ խնդիրների լուծման միջոց: Նրա կարծիքով հարկը՝ որպես պետության ֆինանսական գործիք, ապահովում է բնակչության դրամական միջոցների հավաքումը, դրամական եկամուտների ու մասնավոր խնայողությունների ու տնտեսական կուտակումների կարգավորումը, ստացված եկամուտների ու շահորոյթի վերաբաշխումը, պահանջարկի և առաջարկի միջև հավասարակշռության ապահովումը:

Ուսումնասիրելով տարբեր հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունները՝ կարելի է գալ այն եզրակացության, որ հարկերը համաշխարհային քաղաքակրթության մեջ առաջացել են հպատակ ցեղերից կամավոր ընծաների տեսքով հավաքվող տուրքից: Բացի դա, բնակչության կողմից իշխանների համար հավաքագրվել են այսպես կոչված «նվերներ» և «հարգանքի տուրքեր»:

Հարկ կատեգորիան արտահայտում է այնպիսի հանընդհանուր օրինաչափություններ, որոնք բնորոշ են նաև

---

<sup>1</sup> Тургенев Н. И. Опыт теории налогов, М.: 1937

Ֆինանսական հարաբերություններին, քանի որ հարկերը կապված են ֆինանսական մյուս կատեգորիաների հետ, և մասնավորապես, պետական եկամուտների ու ծախսերի, վարկերի հետ և այլն:

Պետք է նշել, որ հարկերը, արտահայտելով ֆինանսական հարաբերություններին բնորոշ համընդհանուր օրինաչափություններ, միաժամանակ ունեն իրենց առանձնահատկությունները, շարժման ինքնուրույն ձևը և յուրահատուկ գործառույթները, որով էլ տարբերվում են ֆինանսների մյուս կատեգորիաներից:

Բանն այն է, որ հարկերը, լինելով ազգային եկամտի հանրայնացման ձևը, ձեռք են բերում ինքնուրույն շարժունակություն, որը կարգավորվում է ընդունված հարկային օրենքներով ու նորմատիվային ակտերով, որոնք կարող են վերանայվել և փոփոխվել: Հարկերի ինքնուրույն շարժունակության էությունը նրանում է, որ գործող օրենսդրությամբ, ըստ հաշվարկման մեթոդիկայի ու զանձման ժամանակի հարկային սուբյեկտները պարտավորվում են համաձայն հարկադրման սուբյեկտի և օբյեկտի, հարկի աղբյուրի, հարկադրման միավորի ու հարկային դրույքի, վճարել այն բոլոր հարկատեսակները, որոնք սահմանված են օրենսդրությամբ և կազմում են պետական բյուջեի ընդհանուր եկամուտների գերակշռող բաժինը (80-90% ):

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ մի կողմից կրճատվում են ֆիզիկական և իրավաբանական անձի ֆինանսական հնարավորությունները, որպես արտադրության միջոցներ գնողների, իսկ մյուս կողմից աշխատուժ ապրանք գնողի հնարավորությունը, այսինքն՝ կրճատվում է արտադրողական սպառումը:

Տնտեսության մասշտաբով կիրառվող հարկային ճիշտ քաղաքականության հիման վրա, հարկային հարաբերությունների զարգացման միջոցով լայն հնարավորություններ են ստեղծվում պետության կենտրոնացված ֆոնդերի, այսինքն՝ ֆինանսական ռեսուրսների ձևավորման, դրանց արդյունավետ օգտագործման համար, որոնք որոշիչ դեր են կատարում ընդլայնված վերարտադրության գործընթացի կազմակերպման, գիտատեխնիկական առաջադիմության ծավալման, արտադրողական ուժերի համամասնական տեղաբաշխման գործում:

Բոլոր ժամանակներում պետությունների տնտեսական հիմքը իանդիսացել են հարկերը: Վերջիններս յուրաքանչյուր պետության եկամուտների գլխավոր աղբյուրներից են և ուղղվում են նրա արտաքին և ներքին ֆունկցիաների իրականացման ծախսերի ֆինանսավորմանը:

Ըստ վերը նշվածների կարելի է ընդհանրացնել և տալ հարկի հետևյալ սահմանումը: *Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով պետական և համայնքային բյուջե կատարվող համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, տարածքային ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետում:*

Հարկերի ունեցած նշանակությունը, դրանց դերի բարձրացումը երաշխավորվում է վերջիններիս բնորոշ գործառույթներով, որը և միաժամանակ բնութագրում է հարկերի ու ֆինանսական մյուս կատեգորիաների առանձնահատկությունն ու փոխկապվածությունը:

Հարկերի գործառույթների հետազոտումը լայն հնարավորություն է ստեղծում դրանց սոցիալ-տնտեսական էության, ներքին բովանդակության, հասարակական նշանակության բացահայտման համար:

Հարկի գործառույթները դրա էության արտահայտումն են, գործողության մեջ դրա հարաբերողությունների արտահայտման եղանակը: Գործառույթը ցույց է տալիս, թե ինչպես է իրացվում տվյալ տնտեսագիտական կատեգորիայի՝ որպես պետության եկամուտների արժեքային բաշխման և վերաբաշխման գործարքի, հասարակական նշանակելությունը:

Ձարգացած երկրների փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկերը կատարում են հետևյալ հիմնական գործառույթները.

- ֆիսկալային,
- տնտեսական,
- կարգավորող,
- բաշխիչ(սոցիալական)
- վերահսկողական:

Հարկերի **ֆիսկալ** գործառույթի էությունը նրանումն է, որ պետության ձեռքին հարկերը ծառայում են որպես հարկային քաղաքականության իրականացման գործիք: Համաձայն կենտրոնացված հարկային քաղաքականության, բոլոր տեսակի հարկային եկամուտները հավաքագրվում են պետական բյուջեի եկամուտներում, ձևավորում են պետության հարկային եկամուտները և կենտրոնացված ձևով օգտագործվում համապետական նշանակության խնդիրների լուծման համար: Ի դեպ, հարկերի այդ գործառույթի միջոցով ձևավորված կենտրոնացված ֆոնդերի օգնությամբ ստեղծվում են այն անհրաժեշտ նյութական պայմանները, որոնք կարևոր են պետության գործառույթների իրականացման համար:

Հարկերի ֆիսկալ գործառույթի միջոցով երկրում ստեղծված համախառն ներքին արդյունքի, ազգային եկամտի մի մասի պետականացումը օբյեկտիվ նախադրյալներ է ստեղծում տնտեսության պետական կարգավորման շրջանակների ընդլայնման համար: Դա նշանակում է, որ հարկերի ֆիսկալ գործառույթը զգալի չափով պայմանավորում է պետության տնտեսական գործառույթի նպատակային խնդիրների լուծումը, որը և հանգեցնում է հարկերի *տնտեսական* գործառույթի ձևավորմանը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ հարկերի ձևով կազմավորված կենտրոնացված ֆոնդերը որոշիչ դեր են կատարում ընդլայնված վերարտադրության ապահովման գործում, խթանում դրա աճի տեմպերը, ներգործում կապիտալի կուտակման աճի, բնակչության գնողունակության մակարդակի վրա:

Ինչպես տեսնում ենք, հարկերի տնտեսական գործառույթի միջոցով իրականացվում է պետության տնտեսական-կազմակերպական և սոցիալ-մշակութային, պաշտպանության, կառավարման և իրավական այլ հարաբերությունների գծով նախատեսված խնդիրների լուծումը: Հարկերի այս գործառույթի սոցիալ-տնտեսական նշանակությունը նաև նրանում է, որ պետության կողմից հարկային ճիշտ քաղաքականության իրականացման, այդ նպատակով հարկերի գանձման ժամանակի, հիմնավորված դրույքաչափերի սահմանման, հարկային օբյեկտների ու սուբյեկտների, ինչպես նաև հարկման աղբյուրների գծով օրենսդրական ու նորմատիվային ակտերի ընդունումը կարևոր ներգործություն են ունենում տնտեսության կայունացման վրա:

Հարկերի *կարգավորող* գործառույթը համեմատաբար բարդ է, բայց և ունի վճռորոշ նշանակություն և բխում է տնտեսության մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության տարբեր ուղղությունների և, հատկապես, գիտատեխնիկական նորամուծության ու սոցիալական ոլորտի զարգացման նպատակային խնդիրների իրականացման կարևորությունից: Հարկերի այս գործառույթի դերն ու նշանակությունը առավել ևս կարևորվում է ճգնաժամային վիճակում հայտնված երկրներում, որոնցում տնտեսության կայունացման նպատակով հարկային վճարումների ժամանակին և անհրաժեշտ ծավալներով ձևավորումը հնարավոր է ապահովել միայն հարկային սուբյեկտների ու պետության միջև տնտեսական շահերի հիմնավոր զուգակցման ճանապարհով: Ընդհանուր առմամբ տնտեսական այս կամ այն գործընթացների զարգացման նկատմամբ հարկերի կարգավորող գործառույթը դրսևորում է ինչպես խթանող, այնպես էլ զսպող ներգործություն: Խթանող ներգործության միջոց են



հանդիսանում արտոնություններն ու դրանց հավասարեցված մեխանիզմների կիրառումը, իսկ որպես զսպող մջջոց կարող հանդիսանալ առանձին հարկատուների համար բարձր հարկային դրույքաչափերի կիրառումը, առանձին ոլորտների համար հարկային արտոնոթիությունների որոշակի մասի վերացումը և այլն:

Հարկի **բաշխոջ** գործառույթը կրում է ընդգծված սոցիալական բնույթ: Այն արտահայտում է հարկի տնտեսական էությունը՝ որպես տնտեսական հարաբերությունների առանձնահատուկ լծակի, և դրա հիման վրա ձևավորված հարկային համակարգին հաղորդում է սոցիալական ուղղվածություն: Այսպես, ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում բաշխիչ գործառույթի իրագործմամբ պահանջվում է հարկային ծանրություն կրող հարկատուների միջոցների (հարկերի տեսքով) մի մասի փոխանցում սոցիալական և տնտեսապես այդ միջոցների կարիքն ունեցողների օգտին, կամ նյութական արտադրության ոլորտից դեպի ոչ արտադրական ոլորտ:

Հարկի **վերահսկիչ** գործառույթի գոյությունը պայմանավորված է ֆինանսատնտեսական գործունեության մեջ հարկային միջոցների շարժի նկատմամբ պատասկան կարգապահության ապահովման և հարկային հսկողության իրականացման անհրաժեշտությամբ: Այս գործառույթի միջոցով ապահովվում է հարկային վճարումների ժամանակին հավաքագրման, հարկատուների կողմից ժամանակին և ճշգրտված հաշվետվությունների ներկայացման, հարկումից խուսափողների բացահայտման գործընթացների, օրենսդրությամբ նախատեսված ստուգումների կատարումը: Այս գործառույթի կարևորությունը երաշխավորվում է հարկային մարմինների կողմից, որոնք պարտավոր են հետևել հարկման տեղեկատվական նյութերի ժամանակին հավաքագրմանը, հարկային օրենսդրական դրույթների անթերի կատարմանը:

## 1.2 ՀՀ հարկային համակարգի ձևավորման օրենսդրական հիմքերը

Շուկայական տնտեսության պայմաններում հարկերի կարևությունը պայմանավորված է նրանով, որ դրանք դիտվում են որպես պետական եկամուտների հավաքագրման գլխավոր մեթոդ, ինչպես նաև տնտեսության պետական կարգավորման արդյունավետ միջոց:

Հարկային համակարգը պետության մեջ գոյություն ունեցող հարկման պայմանների համակցությունն է, որը ներառում է հարկերի սահմանման և գործողության մեջ դնելու կարգը, հարկատեսակների ամբողջությունը, հարկաիրավական հարաբերություններում պետական իշխանության մարմինների իրավասությունը, հարկ վճարողների իրավունքներն ու պարտականությունները, հարկային հսկողության ձևերը և մեթոդները:

Հարկային համակարգի առանձնահատկությունը պայմանավորված է այն կազմավորող տարրերի, բաղադրիչների դրսևորման ձևերով, հիմնական բնութագրիչներով և յուրահատկություններով: Տնտեսական համակարգերի առկայության պայմաններում այդպիսի բաղադրատարր է պետության հարկային համակարգը, որի տակ հասկացվում է հարկային հարաբերությունների ամբողջությունն ու միասնությունը՝ ներառյալ հարկի սահմանման և ներդրման, հարկային պարտավորությունների ծագման և կատարման, հարկային հսկողության իրականացման և հարկային իրավախախտումների համար հարկադրանքի միջոցների կիրառումը:

Հարկային համակարգի կազմակերպման հիմնարար սկզբունքներն առավել ամբողջական և ամփոփ կերպով ձևակերպվել են դեռևս Ա. Սմիթի կողմից: Նա առանձնացնում էր հարկային համակարգի ձևավորման հետևյալ սկզբունքները.

1. արդարության սկզբունքը, որով հաստատվում է հարկային համընդհանրությունը և հարկատուների միջև բաշխման համաչափությունը՝ նրանց եկամուտներին համապատասխան,
2. որոշակիության սկզբունքը, որի համաձայն հարկատուին պետք է նախօրոք և ճշգրիտ կերպով հայտնի լինի վճարման ենթակա գումարը, հարկման եղանակը և ժամանակը,
3. հարմարության սկզբունքը, ըստ որի հարկման ժամկետները պետք է սահմանվեն՝ ելնելով հարկատուի հայեցողությունից,
4. խնայողության սկզբունքը, ըստ որի յուրաքանչյուր հարկ պետք է գանձվի այնպես, որ հարկատուների կողմից հատկացվող և պետական գանձարան մուտքագրվող դրամական միջոցների միջև լինի որքան համարավոր է փոքր բացասական տարբերություն:

Նշված սկզբունքներից վերջին երեքը պետք է ապահովվեն յուրաքանչյուր առանձին հարկատեսակի համար, մինչդեռ առաջին սկզբունքն առավել ընդհանուր է և վերաբերվում է ամբողջ հարկային համակարգին, հետևաբար միայն այդ կանոնը կարող է

համարվել հարկային համակարգի կազմավորման առանցքային սկզբունք, թեև շատ հեղինակներ Ա. Սմիթի ձևակերպած սկզբունքները մեկնաբանվել են այլ ձևով և իրենց աշխատություններում դրանք ներկայացրել որպես հարկային համակարգի կազմավորման հիմնադրույթներ<sup>1</sup> :

1625թ. հրատարակված աշխատությունում անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը (1561-1626թթ.) այն միտքն է արտահայտում, որ ժողովրդի ցանկությամբ կամ առանց ցանկության գանձվող հարկերը կարող են միանշանակ լինել բոլորի քսակի (դրամապանակի) համար, բայց ոչ միանշանակ հոգեկան առումով: Դրանով իսկ նա հիմնավորում է հարկման արդարացիության ու հավասարության սկզբունքի ունեցած նշանակությունը մարդու բարոյա-հոգեբանական վարքագծի կարգավորման գործում:

Չետագայում այլ հեղինակներ ևս անդրադարձել են հարկային համակարգի կազմավորման սկզբունքների հստակեցմանը: Օրինակ, հարկային համակարգի հայտնի վերլուծաբան, գերմանացի տնտեսագետ Բերնանը առանձնացնում է հետևյալ սկզբունքները.

- արտադրողականության կամ որ նույնն է՝ եկամուտներ ապահովելու ներուժ,
- տնտեսական արդյունավետության, այսինքն հարկային վարչարարությունը պետք է իրականացվի նվազագույն ծախսերով և հարկման մեխանիզմների կիրառումը տնտեսական աճի վրա պիտի ունենա հնարավորինս փոքր բացասական ազդեցություն,
- հարկային բեռի արդարացի բաշխում,
- ճկունություն, ըստ որի հարկային համակարգը պետք է համապատասխանի տնտեսության առկա իրողությունների հետ,
- հստակություն և կայունություն. հարկային համակարգը պետք է կառուցվի հստակ և միանշանակ կերպով մեկնաբանվող իրավական և նորմատիվ ակտերի վրա ու դրանք չպիտի շատ արագ փոփոխվեն,
- հարմարավետություն, ըստ որի հարկային համակարգը պետք է արտացոլի օբյեկտիվ իրականությունը:

Հարկային համակարգի հայտնի վերլուծաբան, գերմանացի տնտեսագետ Բրենանը առանձնացրել է հետևյալ սկզբունքները.

- արտադրողականություն կամ եկամուտներ ապահովելու ներուժ,

---

<sup>1</sup> Brennan G. Public Finance Theory. [www.econlib.org](http://www.econlib.org). paragraph (III,VII.6).

- տնտեսական արդյունավետություն, այսինքն հարկային վարչարարությունը պետք է իրականացվի նվազագույն ծախսերով և հարկման մեխանիզմների կիրառումը տնտեսական աճի վրա պիտի ունենա հնարավորինս փոքր բացասական ազդեցություն,
- հարկային բեռի արդարացի բաշխում,
- ճկունություն, ըստ որի հարկային համակարգը պետք է համապատասխանի տնտեսությունում առկա իրողությունների հետ,
- հստակություն և կայունություն. հարկային համակարգը պետք է կառուցվի իրավական և նորմատիվ ակտերի վրա ու դրանք չպետք է շատ արագ փոփոխվեն,
- հարմարավետություն, ըստ որի հարկային համակարգը պետք է արտացոլի օբյեկտիվ իրականությունը<sup>1</sup>:

Հայտնի ամերիկացի տնտեսագետ Ստենլի Ֆիշերը տվել է հարկային համակարգի կազմավորման երկու առանցքային սկզբունք.

- տնտեսական արդյունավետությունը, ըստ որի հարկային համակարգը պետք է կառուցվի այնպես, որ հարկերի կիրառման ձևախեղող ազդեցությունները հասցվեն նվազագույնի, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկումը ի սկզբանե նպատակ ունի չեզոքացնելու արդեն իսկ գոյություն ունեցող կողմնակի ազդեցությունը,
- արդարությունը, որի տակ հասկացվում է հորիզոնական և ուղղահայաց արդարության սկզբունքների պահպանումը:

Մեկ այլ ականավոր տնտեսագետ՝ հանրային կառավարման հայտնի տեսաբան Ջ. Սոիգլիցը տվել է հարկային համակարգի կառուցման հետևյալ սկզբունքները.

- տնտեսական արդյունավետություն,
- վարչարարության պարզություն,
- ճկունություն,
- քաղաքական համապատասխանություն,
- արդարություն:

Ընդհանուր առմամբ, չնայած տարբեր մեկնաբանություններին ու ձևակերպումներին, այնուհանդերձ ակնհայտ է, որ գոյություն ունեն հարկային համակարգի կազմակերպման կարևորագույն, առանցքային սկզբունքներ, որոնք մեծապես կանխորոշում են պետության հարկային քաղաքականության՝ իր առջև դրված նպատակներին հասնելու

---

<sup>1</sup> Brennan G. Public Finance Theory. [www.econlib.org](http://www.econlib.org). paragraph (III, VII.13-III, VII.19).

ունակությունը: Ըստ այդմ էլ, յուրաքանչյուր հարկային համակարգի համար կարևոր է, որ այն կառուցվի արդարության և արդյունավետության սկզբունքների զուգորդմամբ, լինի ճկուն, համապատասխանի երկրում առկա տնտեսական իրավիճակին, լինի պարզ, հարկատուների համար հասկանալի և ընդունելի, համահունչ լինի պետության տնտեսական քաղաքականության հետ:

Ներկայումս համընդհանուր ճանաչում են ստացել հարկային համակարգի կառուցման հետևյալ սկզբունքները.

- պարտադիր,
- արդարության, ըստ որի տարբերում են հորիզոնականը և ուղղահայացը,
- որոշվածության,
- հարկատուներին նպատակահարմարության,
- խնայողության,
- համամասնության,
- միանգամյա հարկման,
- կայունության,
- օպտիմալության,
- միասնության:

Հարկային համակարգի կազմավորման թվարկված սկզբունքները հաշվի են առնվել նաև ՀՀ-ում հարկային համակարգի հիմքերը դնելուց, երբ 1992 թվականին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «Հայաստանի հանրապետության հարկերի և տուրքերի մասին» օրենքը, որով օրենսդրորեն ամրագրվեցին հարկեր ու տուրքեր հասկացությունները, սահմանվեցին դրանց տեսակները: Ըստ այդ օրենքի սահմանվեցին հետևյալ հարկատեսակները և տուրքերը՝ շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, սոցիալական հարկ, հողի հարկ, մասնագիտական հարկ, գույքահարկ, բնապահպանման հարկ, ճանապարհային հարկ, պետական տուրքեր՝ իրավաբանական և այլ ծառայությունների համար, մաքսատուրքեր՝ արտահանվող և ներմուծվող ապրանքների համար, տեղական հարկեր և տուրքեր:

Հարկ է նշել, որ հետագա մի քանի տարիների ընթացքում ակնհայտ դարձավ հարկային համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը, ինչի արդյունքում օրենսդրությունում իրականացվեցին փոփոխություններ և լրացումներ, ընդունվեցին այլ կարևորագույն օրենքներ ևս, որոնք նպատակ էին հետապնդում ամբողջացնելու ՀՀ հարկային օրենսդրությունը: Այս ամենը շատ կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ-ում հարկային համակարգի ձևավորման համար և հարկային օրենսդրության ելակետը

հանդիսացավ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, ընդունված Ազգային ժողովի կողմից 1997 թվականի ապրիլի 14-ին:

Ըստ այդ օրենքի 12-րդ հոդվածի հանրապետությունում սահմանված են հետևյալ հարկատեսակները.

1. շահութահարկ,
2. եկամտահարկ,
3. ավելացված արժեքի հարկ,
4. ակցիզահարկ,
5. գույքահարկ,
6. հողի հարկ:

Հարկային բարեփոխումները պետք է կրեն համալիր բնույթ և բաղկացած լինեն մի քանի փուլերից: Առաջին, հարկերի սահմանման և ներդրման ոլորտում ծագող հարաբերությունների շրջանակներում անհրաժեշտ է բացահայտել տնտեսության վրա զարգացման տվյալ փուլին համապատասխանող հարկային ճնշման օպտիմալ մակարդակը և կատարելագործել հարկային եկամուտների վերաբաշխման մեխանիզմը բյուջետային համակարգի բոլոր մակարդակների միջև, ինչպես նաև ներդնել ներդրումային ակտիվությունը խթանող հարկային գործուն մեխանիզմներ:

Երկրորդ, հարկերի գանձման ոլորտում ծագող հարաբերությունների շրջանակներում անհրաժեշտ է բացառել հարկատուների կողմից պետության վարկավորման հնարավորությունն ապահովող նորմերը (մասնավորապես, հարկերի «կանխավճարների» գանձման և վճարման ժամկետի երկարաձգման բացառումը) և ապահովել հարկային օրենսդրության որոշակիությունը:

Երրորդ, հարկային վերահսկողության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունների շրջանակներում անհրաժեշտ է նվազագույնի հասցնել ընթացիկ վերահսկողությունը, բացառել տարբեր պետական մարմինների վերահսկողական իրավասությունների կրկնությունները և բարձրացնել հարկային մարմինների տեխնիկական հագեցվածության մակարդակը:

Չորրորդ, հարկային օրենսդրությունը խախտողներին պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարաբերությունների շրջանակներում անհրաժեշտ է ֆինանսական, վարչական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատում:

Վերը նշված խնդիրների համատեքստում, եկամուտների ոլորտում իրականացվող քաղաքականությունը պետք է ուղղված լինի հարկային համակարգի արդյունավետ գործունեության ապահովմանը:

Հարկային համակարգի բարեփոխումների հիմնական խնդիր է հանդիսանում նաև հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխման խնդիրը, հարկային համակարգի պարզեցումը, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը և ծախսատարության կրճատումը: Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը պետք է իրականացվի հարկային մարմինների իրավասությունների հստակեցման, հարկատուների պատասխանատվության բարձրացման գույակցմամբ:

Հարկային համակարգում բարեփոխումների իրականացումը չպետք է սահմանափակվի միայն հարկային օրենսդրության կատարելագործմամբ: Այդ բարեփոխումներն իրենց մեջ պետք է ներառեն նաև գործող օրենքների պահանջների պահպանման նկատմամբ օպերատիվ վերահսկողության սահմանումը և հարկման չենթարկվող ստվերային տնտեսական գործարքների իրականացումը: Ընդ որում բարեփոխումները պետք է կրեն աստիճանական և շարունակական բնույթ և պետք է ուղղված լինեն հետևյալ նպատակների իրականացմանը.

- արտադրության և չեզոքության մակարդակի բարձրացում բոլոր հարկատուների համար հավասար պայմանների ստեղծման հաշվին (չարդարացված հարկային արտոնությունների վերանայման միջոցով),
- տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա բացասաբար ազդող ցածր արդյունավետություն ունեցող հարկերի և տուրքերի վերանայում,
- գործող հարկատեսակների հաշվարկման ընթացակարգերի և մեխանիզմների հստակեցում և պարզեցում,
- հարկային վարչարարության կատարելագործում և հարկերի հավաքման մակարդակի բարձրացում հարկային օրենսդրության մեջ վերահսկողության լրացուցիչ մեխանիզմների ներդրման միջոցով,
- հարկումից խուսափելու հնարավորությունների բացառում:

Հարկային բարեփոխումների հիմնական նպատակ պետք է հանդիսանա հարկերի ֆիսկալ և կարգավորող գործառույթների միջև օպտիմալ հարաբերակցության սահմանումը: Հարկային համակարգի բարեփոխումների հիմնական սկզբունքները պետք է կայանան հարկման հավասար պայմանների ստեղծման, ընդհանուր հարկային բեռի նվազեցման և հարկային համակարգի պարզեցման մեջ: Միջնաժամկետ հեռանկարում հարկային բարեփոխումները պետք է ուղղված լինեն հարկային օրենսդրության կատարելագործմանը, դրա պարզեցմանը, հարկային համակարգի կայունության և թափանցիկության

ապահովմանը, չեզոքության բարձրացմանը և այլն: Նշված պայմանների առկայության դեպքում հարկային համակարգը կարող է դառնալ երկրի տնտեսական առաջընթացին նպաստող կարևոր գործոն:

Հանրապետության հարկային համակարգի բարեփոխման կարևոր քայլերից կարելի է համարել հիմնական հարկատեսակների հետ կապված հարաբերությունները կանոնակարգող նոր օրենքների ընդունումը: Դրանք են «Շահութահարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Ակցիզահարկի մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքները: ՀՀ հարկային համակարգի բարեփոխումների նոր փուլի ուշագրավ քայլերից կարելի է համարել 2000 թվականի հունիսի 1-ից գործողության մեջ մտած «Պարզեցված հարկի մասին» օրենքը: Պարզեցված հարկը ձեռնարկատիրական գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է:

Հարկին և հարկային համակարգին բնորոշ են մի շարք հատկանիշներ, որոնք դրանց տարբերում են պետության մյուս՝ ոչ հարկային եկամուտների գանձման մեթոդներից: Հարկին բնորոշ են պարտադիր, անհատույց, նախապես սահմանված որոշակի չափերով ու ժամկետներով եկամուտներից պետությանը վճարումներ կատարելու հատկանիշներ կամ մեթոդներ: Ելնելով այդ հատկանիշներից՝ առաջանում է հարկային համակարգի մեխանիզմների մշակման ու գործնականում կիրառելու անհրաժեշտություն: Հարկային համակարգի մեխանիզմների հիմքում ընկած են հետևյալ հասկացությունները.

- հարկի սուբյեկտ կամ հարկ վճարող,
- հարկի օբյեկտ կամ աղբյուր,
- հարկային միավոր,
- հարկի դրույքաչափ,
- հարկի վճարման ժամկետ,
- հարկային արտոնություններ:

**Հարկի սուբյեկտ կամ հարկ վճարող** ասելով հասկանում ենք իրավաբանական և ֆիզիկական այն անձանց, որոնք օրենսդրությամբ պարտավոր են պետությանը վճարել սահմանված հարկերը:

**Հարկի օբյեկտ կամ աղբյուր** են հանդիսանում գույքը, եկամուտը, աշխատավարձը, շահույթը, ապրանքները, ծառայությունները և այլ օբյեկտները:

**Հարկային միավոր** ասելով հասկանում ենք հարկման ենթակա օբյեկտի այն միավորը, որի նկատմամբ սահմանվում են



հարկի դրույքաչափերը: Օրինակ շահութահարկի ժամանակ հարկվող շահույթը և այլն:

**Չարկի դրույքաչափը** սահմանվում է հարկային միավորի նկատմամբ տոկոսներով կամ բացարձակ գումարներով: Դրույքաչափերը լինում են պրոգրեսիվ, ռեգրեսիվ, համամասնական և հաստատուն: Պրոգրեսիվ դրույքաչափերը բարձրանում, իսկ ռեգրեսիվները իջնում են եկամտի (հարկման օբյեկտի) ավելացմանը համապատասխան: Չարկի համամասնական դրույքաչափերը սահմանվում են միասնական տոկոսաչափով, իսկ հաստատուն դրույքաչափերը՝ բացարձակ գումարով, անկախ եկամտի չափից:

**Չարկի վճարման ժամկետները** (տասնօրյա, ամենամսյա, եռամսյա, տարեկան) սահմանվում են, ելնելով վճարման ենթակա հարկի գումարների չափից, դրանց վճարման հաճախականությունից և պետական ծախսերի ֆինանսավորման անընդհատությունն ապահովելու պահանջից:

**Չարկային արտոնություններ** ասելով հասկանում ենք հարկի սուբյեկտներին հարկումից մասնակի կամ լրիվ ազատումը: Օրենսդրությամբ սահմանված են հարկային հետևյալ արտոնությունները՝ հարկման օբյեկտի արժեքի նվազեցում, չհարկվող միմիումի սահմանում, հարկից լրիվ ազատում, հարկի նվազեցում, հարկի հաշվարկման ու վճարման ժամկետային արտոնության սահմանում և այլն:

Ինչպես յուրաքանչյուր համակարգի, այնպես էլ հարկային համակարգի գորյության և գործունեության առանցքային չափանիշը համակարգը կազմող տարրերի միջև փոխկապվածության և ամբողջականության ապահովման, համակարգի առջև դրված խնդիրների լուծման ունակությունն է: Այսինքն հարկային համակարգը որոշակի բաղադրիչների օրգանական ամբողջությունն ու միասնությունն է, որոնց միջև կապերի ամրությունն ու ճկունությունը կանխորոշում են համակարգի կարճաժամկետ և ռազմավարական զարգացման հնարավորությունները ինչպես նաև հարկային համակարգի հիմնական նպատակի՝ պետական հարկային քաղաքականության արդյունավետ իրականացման ապահովումը:

Չարկային համակարգի բաղադրիչներն են՝

1. հարկերի ենթահամակարգերը,
2. պետության հարկային քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմինների ենթահամակարգը,
3. հարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվ և իրավական ակտերի ենթահամակարգերը:

Վարչահրամայական տնտեսական մեխանիզմից շուկայական տնտեսական մեխանիզմին անցումը նոր պահանջներ

ու խնդիրներ առաջադրեց նաև հարկաբյուջետային, գնային, դրամավարկային քաղաքականության վերակառուցման ռազմավարությանը, որոնք բխում էին նոր արտադրական հարաբերությունների ձևավորման, նոր հարկային քաղաքականության իրականացման շահերից:

Հարկային քաղաքականության հիմնավորված իրականացումը և հարկային համակարգի ձևավորումը բխում են տվյալ երկրում հարկային մեխանիզմի գործունեության և սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներից:

### 1.3 Հարկերի դասակարգման սկզբունքները

ժամանակակից պայմաններում հարկային համակարգը գրեթե բոլոր երկրներում ներառում է հարկերի տարբեր տեսակներ, որոնք ունեն ազգային և տարածքային առանձնահատկություններ:

Հարկային համակարգի առանցքային բնութագրիչներ են կիրառվող հարկատեսակները և դրանց դրույքաչափերը:

Պրակտիկայում ընդունված է ըստ գանձման եղանակի հարկերը դասակարգել ուղղակի և անուղղակի հարկերի: Ընդ որում նման ձևակերպում (ուղղակի, անուղղակի) առաջին անգամ տվել է անգլիացի փիլիսոփա Ջ. Լոկը 1692թ. հրապարակած իր աշխատությունում, որտեղ նշում է. «Ցանկացած հարկ, անկախ դրա գանձման մեթոդից, վերջին հաշվով ընկնում է հողատիրոջ՝ որպես ուղղակի հարկ վճարողի վրա, իսկ այն հարկերը, որոնք կիրառվում են այլ օբյեկտների նկատմամբ անուղղակիորեն, դարձյալ այդ ծանրությունը կրում է հողատերը՝ որպես անուղղակի հարկ վճարող»<sup>1</sup>:

Չնայած Ջ. Լոկի հարկերի դասակարգման տեսության վերաբերյալ տեղ գտած բազմաթիվ քննադատությունների, այնուամենայնիվ այն չի կորցրել իր արդիականությունը զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների տեսանկյունով:

Հետագայում Ա. Սմիթը զարգացնելով ուղղակի և անուղղակի հարկերի դասակարգման անհրաժեշտությունը, եկել է այն եզրահանգման, որ ուղղակի հարկերը համարվում են փոխանցելի, խոսքը հատկապես վերաբերվում է շահույթից և

---

<sup>1</sup> Пушкарев В. Истории финансовой мысли и политики налогов. М.: Инфра-М, 1996, с.119,140-141


աշխատավարձից գանձվող հարկերին, իսկ անուղղակի հարկերն ուղղակիորեն ընկնում են ծախսերի վրա:

Ուղղակի հարկերը սահմանվում են ելնելով հարկատուի անմիջական տնտեսական գործունեության արդյունքներից: Այսինքն, այդ հարկատեսակների գծով հարկային հարաբերությունները պետության և հարկ վճարողների միջև ձևավորվում են անմիջականորեն, իսկ հարկային պարտավորությունները առաջանում են միայն տնտեսական գործունեության արդյունքի՝ շահույթի կամ եկամտի առկայության դեպքում: Ուղղակի հարկերը համարվում են նաև եկամտագույքային: Թեև գույքահարկը և հողի հարկը դասվում են ուղղակի հարկերի խմբին, սակայն նշված հարկատեսակները վճարվում են առանց տնտեսական գործունեության արդյունքները հաշվի առնելու: Երբեմն նաև այս հարկատեսակները կոչվում են նաև գույքային հարկեր, ինչպես նաև ստատիկ հարկեր:

Ուղղակի հարկերը ըստ իրենց բովանդակության ու նշանակության ստորաբաժանվում են երկու հիմնական խմբի՝

- անձնական-եկամտային ուղղակի հարկեր,
- գույքային ուղղակի հարկեր (տես գծապատկեր

1.3.1):



**Գծապատկեր 1.3.1 Ուղղակի հարկերի դասակարգումը**

Անձնական-եկամտային են համարվում այն հարկերը, որով հարկվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ստացված եկամուտները: Հարկման այս ձևի ժամանակ պահանջվում է ելակետ ընդունել ոչ միայն հարկատուների ստացած եկամուտները, այլև հարկային սուբյեկտների ֆինանսական դրությունը, կատարվող աշխատանքի հասարակական նշանակությունը, ֆիզիկական անձի ընտանեական վիճակը, որոնք հնարավոր չէր հաշվի առնել գույքային հարկերի (գույքահարկի և հողի հարկի) հաշվարկման ժամանակ:

Հայաստանի Հանրապետությունում գործող անձնական-եկամտային և գույքային ուղղակի հարկերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը, միմյանցից տարբերվում են հաշվարկման ինքնուրույն մեխանիզմներով և որոշիչ ներգործություն են ունենում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ու առաջադրված նպատակային խնդիրների լուծման վրա:

Անուղղակի հարկերը գանձվում են ապրանքների, արտադրանքի, ծառայությունների վերջնական սպառողներից և ուղղակիորեն կապված են ոչ թե տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների, այլ որոշակի գործառնությունների իրականացման հետ: Ըստ այդմ, պետությունը անուղղակի հարկերի գումարն ընդգրկելով արտադրված արտադրանքի, մատուցված ծառայությունների արժեքի մեջ, դրանք գանձում է միայն շրջանառության և եկամտի շարժման ընթացքում: Անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների արժեքում և միջանկյալ փուլերում հաշվարկվում են հաշվանցման սկզբունքով, այսինքն, հարկատուն հաշվետու ժամանակաշրջանում պետությանն է վճարում իրացված ապրանքների և ծառայությունների արժեքի մեջ ներառված և մատակարարներին վճարած անուղղակի հարկերի տարբերությունը:

Այսպիսի հարկումն ընդունված է համարել անուղղակի, քանի որ հարկատուի՝ այսինքն՝ սպառողի և պետության միջև հարկային հարաբերությունները ծագում են ոչ անմիջականորեն, անուղղակի կերպով: Որոշ դեպքերում էլ անուղղակի հարկերը բնութագրվում են նաև որպես սպառման հարկեր, քանի որ արդյունքում հարկային բեռն ամբողջությամբ ընկած է վերջնական սպառողի վրա:

Հայտնի է նաև ուղղակի և անուղղակի հարկերի դասակարգման նաև այլ եղանակ, որի էությունը կայանում է նրանում, որ եթե պետությունը որոշում է հարկատուի վճարունակությունը և նրան է ուղղում իր պահանջները, ապա հենց

դրանք էլ համարվում են ուղղակի հարկեր: Եթե պետությունը չի նպատակադրվում գնահատել հարկատուի վճարունակությունը և բավարարվում է միայն դրա մասին անուղղակի տեղեկություններով, ապա հենց դա էլ համարվում է անուղղակի հարկում:

Հարկերի նման հատկանիշով դասակարգումը չի կարելի համարել հիմնավոր, քանի որ հարկման գործընթացում կարող են փոխվել ինչպես հարկման գործելաձևերն ու եղանակները, այնպես էլ նույն հարկը կարող է հեշտությամբ անցնել անուղղակիից դեպի ուղղակի հարկման կամ ընդհակառակը:

Ուղղակի և անուղղակի հարկերի դասակարգման որպես հիմնական չափանիշ կարող է ծառայել հարկ վճարողին վերջնական որոշելը: Եթե վերջնական հարկ վճարող է հարկվող սեփականության տերը կամ եկամուտ ստացողը, ապա նման հարկն ուղղակի է: Անուղղակի հարկի վերջնական վճարողն ապրանք սպառողն է, որի վրա հարկային ծանրությունը տեղափոխվում է ապրանքի գնի վրա արժեքի ավելացման միջոցով: Իրականում այս չափանիշը միշտ չէ, որ կարող է իրեն արդարացնել, քանի որ ուղղակի հարկման ժամանակ ծանրությունը նույնպես կարող է ընկնել սպառողի վրա՝ գնի աճի մեխանիզմի միջոցով (օրինակ շահութահարկի դեպքում):

Հարկերը ըստ նշանակության և օգտագործման նպատակի բաժանվում են երկու խմբի.

- ընդհանուր նշանակության հարկերի,
- նպատակային նշանակության հարկերի:

Ընդհանուր նշանակության հարկերը ամբողջությամբ ներառվում են երկրի պետական բյուջեում և օգտագործվում են համապետական նշանակություն ունեցող միջոցառումների իրականացման նպատակով, իսկ նպատակային հարկերը ունեն հատուկ նշանակություն և ներառվում են հատուկ ֆոնդերում և ունեն նպատակային ուղղվածություն: Օրինակ սոցիալական հարկը, որիը դասվում է պիտակավորված հարկերի շարքին: Պիտակավորված են այն հարկերը, որոնց գանձման պահին արդեն հայտնի են այդ հարկատեսակներից գոյացած միջոցների ծախսման ուղղությունները:

Ելնելով վարչական մարմինների գործունեության և ձևավորվող հարկերի օգտագործման առանձնահատկություններից, հարկերը դասակարգվում են երկու խմբի.

- պետական,
- տեղական հարկերի:

Պետական հարկերը այն հարկերն են, որոնք գանձվում են կենտրոնական կառավարման մարմինների կողմից և հարկային

օրենսդրության համաձայն մուտք են լինում երկրի պետական բյուջե, իսկ տեղական հարկերը գանձվում են տեղական մարմինների կողմից և մուտք են արվում տեղական բյուջեներ, այդ թվում համայնքների և քաղաքների կտրվածքով ձևավորված բյուջեներ:

## Գլուխ 2 ՀՀ-ում կիրառվող ուղղակի հարկերի էությունը և գանձման կարգը

Ուղղակի հարկերը այն հարկերն են, որոնք գանձվում են պետության կողմից և անմիջականորեն կապված են հարկ վճարողների եկամուտների կամ նրանց ունեցվածքի հետ:

Ուղղակի հարկերի համար հարկման օբյեկտ է համարվում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց աշխատանքային գործունեության դիմաց ստացվող եկամուտները, ինչպես նաև հարկ վճարողների ունեցվածքը՝ հողատարածությունը, գույքը:

ՀՀ-ում գործող ուղղակի հարկերն են.

1. շահութահարկ,
2. եկամտահարկ,
3. գույքահարկ,
4. հողի հարկ:

### 2.1 Շահութահարկ

Ուղղակի հարկերի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի շահութահարկը, որը մի կողմից, հանգեցնում է հարկային եկամուտների ավելացմանը, մյուս կողմից, պայմաններ ստեղծում արտադրական ներուժի ավելացման համար:

Շահութահարկը՝ հարկ վճարողների կողմից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է և որոշիչ դեր է կատարում ընդլայնված վերարտադրության իրականացման գործում: Այդ օրենքով կարգավորվում են շահութահարկի որոշման և վճարման հարաբերությունները, սահմանվում այդ հարկատեսակը վճարողների շրջանակը, հարկման դրույքաչափերը, ինչպես նաև այդ հարկատեսակի հաշվարկման և վճարման կարգը:

Շահութահարկի որոշման համար ելակետային հիմք են ծառայում հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունները, որոնք կարգավորվում են համապատասխան օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների միջոցով և բխում են «Հարկերի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների դրույթների ու նորմատիվային ակտերի պահանջներից:

Այս առումով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով հատուկ սահմանվել է հարկի գանձման համար պարտադիր սահմանադրական պահանջ, որով առաջին անգամ յուրաքանչյուր հարկատուի առջև օրենքով պարտավորություն դրվեց, որ հարկատուները համապատասխան ժամկետում որպես հարկ վճարողներ պարտավոր են հաշվառման կանգնել հարկային մարմիններում: Բացի դրանից տեղեկություն է տրվում հարկ վճարողների, հարկվող օբյեկտի, հարկվող շահույթի հաշվարկման մեխանիզմի, շահութահարկի դրույթաչափերի, սահմանված արտոնությունների, հարկի վճարման ժամկետների, կանխավճարների գանձման կարգի մասին և այլն:

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական առևտրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների և ՀՀ Կենտրոնական բանկի:

Ռեզիդենտ են համարվում ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները, որոնց համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

Ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կրգավիճակ չունեցող ձեռնարկությունները, որոնց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Եթե այդ տարբերությունը բացասական է կամ հավասար է 0-ի, ապա շահութահարկ չի հաշվարկվում:

Համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտ է հաշվետու տարում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը: Սեփական կապիտալը ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է: Ակտիվ է համարվում հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գոյւյքը, գույքային իրավունքները, արտարժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույքը: Պարտավորությունը հարկատուի առկա պարտքն է (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություններ և այլն):

Շահութահարկի հաշվարկման համար անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել հարկվող շահույթը և, հետևաբար համախառն եկամուտը և նվազեցումները: Համախառն եկամտի և նվազեցումների ճիշտ հաշվարկման համար անհրաժեշտ է որոշել.

- կատարված գործարքներից արդյոք առաջանում են եկամուտներ կամ նվազեցումներ,
- եկամուտների և նվազեցումների առաջացման պահը,
- եկամուտների և նվազեցումների չափը (արժեքը):

Եկամուտների թվին են դասվում ապրանքների, ծառայությունների, հիմնական միջոցների իրացումից ստացվող հասույթը, փոխառության դիմաց ստացվող տոկոսները, վարձակալության դիմաց ստացվող վճարները, ռոյալթին, շվահաբաժինները, ապահովագրական հատուցումները, Ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքներից ստացվող եկամուտները և այլն (ավելի մանրամասն տես «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 7):

Եկամուտ չեն համարվում մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից հարկատուի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը, համատեղ գործունեության նպատակով միավորող միջոցները, արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը, օրենքով տրվող հարկային արտոնությունների գումարները, ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները և ծառայությունները:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված ծախսերի, կորուստների և այլ նվազեցումների չափով: Ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների նվազումը և պարտավորությունների ավելացումը, որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազեցմանը:



Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝

- նյութական ծախսերը,
- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վվճարումները,
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,
- ամորտիզացիոն մասհանումները,
- ապահովագրական վճարները,
- չփոխհատուցվող հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները,
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսները,
- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային, ապահովագրական ու վարկային կազմակերպությունների այլ ծառայությունների համար վճարները,
- գովազդային, ներկայացուցչական, գործուղման, դատական, աշխատողների հավաքագրման ծախսերը,
- պատճառված վնասի փոխհատուցումը,
- աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը,
- ֆակտորինգային, հավատարմագրային գործառնությունների ծախսերը,
- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը,
- հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը:

Եկամուտների և նվազեցումների հաշվարկման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝


- նվազեցումները դասակարգվում են ծախսերին, կորուստներին և այլ նվազեցումներին,
- համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով,
- նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից նվազեցվում է միայն մեկ անգամ,
- Եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով (անկախ վփաստացի վճարումից):

Նվազեցումների տարբեր տեսակները համախառն եկամտից նվազեցվում են տարբեր մոտեցումներով: Եթե ծախսերը անհրաժեշտության սկզբունքով կապվում են եկամուտների

ստացման հետ (օրինակ, նյութական ծախսերը, հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները, աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները և այլն), ապա կորուստների ճանաչումը որպես նվազեցում եկամուտների ստացման հետ առնչություն չունի: Ինչ վերաբերվում է այլ նվազեցումներին, ապա դրանց նվազեցումը համախառն եկամտից պայմանավորված է տեսակից: Օրինակ, կազմակերպության կողմից ստացված շահաբաժինները միաժամանակ հանդիսանում են եկամուտ և այլ նվազեցում, հետևաբար, դրանց գծով նվազեցումը կատարվում է միայն շահաբաժինները որպես եկամուտ ճանաչման պահին:

Այնուհետև, եթե «ծախսերի» և «կորուստների» նկատմամբ սահմանված են բավականին խցստ պահանջներ կապված դրանց փաստաթղթերով հիմնավորվածության հետ, ապա այլ «նվազեցումների» հիմնավորումը կարող է կատարվել այլ եղանակներով:

Այսպիսով՝



Համախառն եկամտից ծախսերի նվազեցումները կատարվում են կապված ծախսերի բնույթից: Ուղղակի ծախսերը՝ այսինքն այն ծախսերը որոնք անմիջականորեն կապված են տվյալ եկամտի ստացման հետ, նվազեցվում են միայն տվյալ եկամտի ստացման պահին: Օրինակ, ապրանքների ձեռք բերման արժեքի չափով կատարված ծախսերը նվազեցվում են այդ ապրանքների վաճառքից ստացված եկամուտների ստացման պահին: Ընդհանուր ծախսերը, այսինքն այնծախսերը, որոնք անմիջականորեն կապված են տվյալ եկամտի ստացման հետ, նվազեցվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերվում են: Օրինակ, կազմակերպության վարչակառավարչական աշխատակազմի աշխատավարձի գծով կատարված ծախսերը նվազեցվում են այն տարվա ընթացքում, որի համար հաշվարկվել է աշխատավարձ:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող հիմնական միջոցների ու ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով, հիմնական միջոցների վրա

կատարված ընթացիկ ծախսերի չափով, վարձակալի մոտ՝ վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով: հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսերն ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են և ամորտիզացվել են սահմանված կարգով:

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է, ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն հետևյալ նվազագույն ժամկետներից.

- շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար 20 տարի,
- հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների, շենքերի և շինությունների համար 10 տարի,
- հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար 3 տարի,
- հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար 1 տարի,
- այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկարկների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար 5 տարի,
- մինչև հիսուն հազար արժողությամբ հիմնական միջոցների համար 1 տարի:

Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից միայն մեկ անգամ հանման սահմանափակումը նպատակաուղղված է բացառելու կրկնակի նվազեցման դեպքերը: Օրինակ, ծախսերի թվին են դասվում ապրանքների ձեռք բերման արժեքի չափով կատարված ծախսերը և տրանսպորտային ծախսերը: Ընդ որում, ապրանքի ձեռք բերման արժեքը ներառում է նաև այն տրանսպորտային ծախսերը, որոնք այդ կազմակերպությունը կատարել է այդ ապրանքի ձեռք բերման ժամանակ: Այս դեպքում տրանսպորտային ծախսերը նվազեցվելու են ապրանքների վաճառքից ստացված եկամուտներից միայն ապրանքների ձեռք բերման արժեքի կազմում, իսկ որպես առանձին ծախս նվազեցում չի կատարվում:

Հաշվեգրման եղանակով եկամուտների և ծախսերի հաշվառումը անմիջականորեն կապված է եկամուտների և ծախսերի առաջացման պահի հետ: Օրինակ, եթե կազմակերպությունը ապրանքները վաճառել է 2004թվականի հունիս ամսին, իսկ գնորդը վճարումը կատարել է 2005թվականին,

ապա կազմակերպությունը եկամուտները և ծախսերը ձևակերպում է 2004թվականին, երբ փաստացի կատարվել է գործարքը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են նաև ծախս չհամարվող տարրերը: Դրանք են

- հարկատուի սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով,
- այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները,
- հարկատուի կողմից հետ գտնված իր բաժնետոմսերի, բաժնենասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը,
- արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնակիստման բացասական արդյունքը,
- ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվների գծով ծախսերը և ծառայությունները

Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ ռեզիդենտների համար հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, իսկ ոչ ռեզիդենտների համար՝

- ապահովագրությունից, վերաապահովագրությունից և ֆրախտից եկամուտների դեպքում՝ 5%,
- պասիվ եկամուտների դեպքում՝ 10%:

Պասիվ եկամուտներից են՝ շահաբաժիններ, տոկոսները, ռոյալթիները, Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները, ինչպես նաև այդ գույքի կամ այլ ակտիվների օտարումից ստացված եկամուտները և այլն:

Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով սահմանված են շահուհութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են նաև շահութահարկի գծով հետևյալ արտոնությունները.

- շահութահարկից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվածեկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված եկամտի մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

Գյուղատնտեսական արտադրանք են համարվում կենդանիների կամ բույերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

- հացահատիկային և հացահատիկատլոռային մշակաբույսերը,
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը,
- կերարտադրության այլ արտադրանքը,
- տեխնիկական մշակաբույսերը,
- պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտիս արտադրանքը,
- պարտեզների, խաղողի այգիների, բազմայա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը,
- անասնաբուծության, խոզաբուծության, ոչխարաբուծության և այծաբուծության, թռչնաբուծության արտադրանքները և այլն:
- Ավանդների երաշխավորման հիմնադրամի եկամուտները,
- հարկատուի նոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 %-ի չափով,
- օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների, բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների, շահութահարկի գումարը նվազեցվում է ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով սահմանված ժամանակացույցի և չափերի, եթե կատարված ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 500 մլն. դրամ,
- ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ հանդիսացող ռեզիդենտի հաշվետու տարվա շահութահարկի գումարը նվազեցվում է 100%:

### **Օրինակ.**

Կազմակերպությունը տարվա ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացել է 5000,0հազ. դրամ եկամուտ, իսկ հիմնական միջոցների վաճառքից 540,0հազ. դրամ եկամուտ: գյուղատնտեսության գծով ծախսերը կազմել են 4000,0հազ. դրամ, իսկ հիմնական միջոցների մնացորդային արժեքը 140,0հազ. դրամ:

Տվյալ դեպքում հիմնական միջոցների վաճառքից ստացված փաստացի եկամուտը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը (540.0 : (5000.0 +540.0)=9,75%, հետևաբար կազմակերպությունը ազատվում է շահութահարկի վճարումից: Եթե կազմակերպությունը հիմնական միջոցների վաճառքից 540,0հազ.

դրամի փոխարեն ստանար 600.0հազ. դրամ, ապա այդ դեպքումկիհանդիսանար արդեն շահութահարկ վճարող, քանի որ  $(600.0 : (5000.0 + 600.0)) = 10.7\%$ :

Եթե գյուղատնտեսությամբ զբաղվող կազմակերպության հիմնական միջոցների և այլ գույքի վաճառքից ստացված և այլ եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ գերազանցում է տասը տոկոսը, ապա կազմակերպությունը շահութահարկը վճարում է միայն հիմնական միջոցների և այլ ակտիվների վաճառքից ստացված և այլ եկամուտների մատով: Տվյալ դեպքում կազմակերպության կողմից վճարվելիք շահութահարկը կկազմի՝

ա/ հիմնական միջոցների վաճառքից եկամուտներ - 600.0 հազ. դրամ

բ/ նվազեցումներ - 140.0 հազ. դրամ

գ/ հարկվող շահույթ =  $600.0 - 140.0 = 460.0$  հազ. դրամ

դ/ շահութահարկի գումար =  $460.0 \times 20\% = 92.0$ հազ. դրամ:

Օրենքով կարող են սահմանվել նաև շահութահարկից ազատելու և ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ արտոնություններ:

Շահութահարկի վճարման հետ կապված կիրառվում է հետևյալ կանխավճարային համակարգը: Եթե նախորդ տարում հարկատուի փաստացի շահութահարկի գումարը գերազանցել է 500.000 դրամը, ապա փաստացի հաշվարկված շահութահարկի գումարի 1/16 չափով յուրաքանչյուր ամսվա մինչև 25-ը ներառյալ վճարվում է կանխավճար: Սահմանված ծանկետներում կանխավճարային մուծումներ չկատարելու դեպքում հարկային մարմինն այդ կանխավճարային գումարիների և դրանց ծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ կարող է ներկայացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այն հարկատուն, որը նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել, կամ որի նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել 500.000 դրամը, կարող շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո կարող կանխավճարներ չկատարել: Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, հարկատուն շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր ամսամ կատարում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով: Նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարները հայտնի դառնալուց հետո շահութահարկի հաշվարկի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացումը տվյալ տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ տարվա սկզբից աճող

հանրագումարով: Հաշվետու տարվա ավարտից հետո հարկատուները ելնելով հաշվարկված հարկվող շահույթից, հաշվարկում է շահութահարկի գումարը՝ դրան հաշվանցելով տվյալ հաշվետու տարվա համար կատարված կանխավճարների գումարները:

Եթե հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարը պակաս է տվյալ տարվա համար կատարված կանխավճարների հանրագումարից, ապա դրանց տարբերությունը ենթակա է վերադարձման: Հակառակ դեպքում, հարկատուները պարտավոր է տարբերությունը վճարել պետական բյուջե:

Ներկայումս այդ կանխավճարային մեծությունը համեմատության մեջ է դրվում մեկ տոկոս կանխավճարային մեծության հետ: Վերջինս հաշվարկվում է հետևյալ կերպ.

**Կանխ.մեծ.=(Տվյալ ամսվա իրացումից զուտ հասույթ - Տվյալ ամսում կատարված անորոշագիծն ծախս) x 0,01,**

ընդ որում, անորոշագիծն ծախսերը չպետք է գերազանցեն իրացումից հասույթի 50%-ը: Գերազանցելու դեպքում տեղափոխվում է հաջորդ ամիս պակասեցման:

Նոր կազմավորված կազմակերպությունները, վնասով աշխատող կազմակերպությունները վճարում են շահութահարկի մեկ տոկոս նվազագույն կանխավճարային մեծությունը:

Կանխավճարային մուծումներ կատարում են նաև ոչ ռեզիդենտներ: Եթե ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցում է 2 մլն. դրամը, ապա ոչ ռեզիդենտը տարվա ընթացքում կիսամյակը մեկ, կատարում է կանխավճարների մուծումներ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ քառորդի չափով, հավասար բաժիններով, մինչև հաշվետու տարվա հուլիսի 1-ը ներառյալ:

Կազմակերպությունների կողմից վճարվող շահութահարկի գումարները պակասեցվում են այն գումարի չափով, որը իրենցից գանձվել է օտարերկրյա պետություններում նրանց օրենսդրությամբ համապատասխան: ընդ որում, պակասեցվող շահութահարկի գումարը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամուտներից ՀՀ-ում վճարման ենթակա շահութահարկի գումարը:

### **Օրինակ**

Կազմակերպությունը 2004թ. գործունեություն է իրականացնում ՀՀ-ում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի միջոցով: Հայաստանում իրականացված գործունեությունից ստացվել են 20մլն. դրամի չափով եկամուտներ և կատարվել են 18մլն. դրամի անհրաժեշտ և փաստաթղթերով

հիմնավորված ծախսեր, իսկ օտարերկրյա պետությունում իրականացված գործունեությունից ստացվել են 10 մլն. համարժեք դրամի եկամուտներ և կատարվել 7 մլն. համարժեք դրամի փաստաթղթերով հիմնավորված ծախսեր, որից 1 մլն. դրամը ՀՀ օրենսդրությամբ չեն ճանաչվել որպես եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսեր: Օտարերկրյա պետությունում իրենց օրենսդրություն համապատասխան կազմակերպությունը վճարել է 0.9 մլն. դրամ հարկ:

Տվյալ դեպքում կազմակերպության շահութահարկը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

ա/ համախառն եկամուտ =  $20 + 10 = 30$  մլն. դրամ

բ/ նվազեցումները =  $18 + 6 = 24$  մլն. դրամ

գ/ հարկվող շահույթ =  $30 - 24 = 6$  մլն. դրամ

դ/ շահութահարկ =  $6 \times 20\% = 1.2$  մլն. դրամ:

Օտարերկրյա պետությունում իրականացված գործունեությունից շահութահարկը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ համապատասխան հետևյալ ձևով՝

$(10 - (7 - 1)) \times 20\% = 0.8$  մլն. դրամ:

Հայաստանում վճարման ենթակա շահութահարկի գումարը կկազմի  $1,2 - 0,8 = 0,4$  մլն. դրամ:

Շահութահարկի գծով հաշվետվությունը ներկայացվում է հաջորդ տարվա մինչև ապրիլի 15-ը, իսկ վճարումը կատարվում է մինչև ապրիլի 25-ը ներառյալ: Այս կարգը գործում է նաև ոչ ռեզիդենտների համար:

Շահութահարկի մասին օրենքը խախտելու համար վճարողները և դրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար նախատեսված տուգանքներ չեն կիրառվում այն հարկատուներից, որոնք մինչև հարկային մարմինների ստուգումների սկսելը հարկատուն ինքնուրույն հայտնաբերում են շահութահարկի հաշվարկման հետևապես սխալները և այդ մասիվոր հանձնում են հարկային մարմիններին:

## 2.2 Եկամտահարկ

Եկամտահարկը առավել ավանդական հարկատեսակ է, որը գանձվել է տնտեսության զարգացման ողջ ընթացքում:

Եկամտահարկը պրոգրեսիվ հարկատեսակ է, հարկային համակարգում իր նշանակությամբ, արտադրության, աշխատողների գործունեության խթանման ու նրանց իրական



եկամուտների ավելացման տեսակետից կարևոր դեր ունի: Որոշ երկրներում (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա և այլն) բյուջեի ամենախոշոր եկամտային աղբյուրը եկամտահարկից մուտքերն են, իսկ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում եկամտահարկը տեսակարար կշռով չորրորդն է:

Դա նշանակում է, որ եկամտահարկը այն հարկատեսակն է, որի ներգործությունը բնակչության կենսամակարդակի վրա ունի որոշիչ նշանակություն և գնալով էլ ավելի է կարևորվում վերջինիս սոցիալական բնույթը:

Եկամտահարկը, որպես ուղղակի հարկ, իրենից ներկայացնում է հարկային գործակալների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե պարտադիր վճարվող ուղղակի հարկ: «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը անցումային շրջանում նույնպես կրել է բազմապիսի փոփոխություններ և դրանցով հանդերձ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 1998թ. հունվարի 1-ից:

Ընդունված օրենքով սկզբում սահմանվեց եկամտահարկի տարեկան /աճողական/ հաշվարկման կարգը, որը գործեց մինչև 2000թ. ներառյալ: 2000թ. դեկտեմբերի 26-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումը, ըստ որի 2001թ. հունվարի 1-ից սահմանվեց դրույքաչափերի նոր սանդղակ:

Նոր օրենսդրության համաձայն հարկային գործակալների համար սահմանվեց եկամտահարկի ամսական հաշվարկման այնպիսի կարգ, որի համաձայն ֆիզիկական անձի հարկվող եկամուտը և դրանից պահվող եկամտահարկի գումարը պահանջվեց հաշվարկել ոչ թե տարեկան աճողական եկամտից, այլ միայն յուրաքանչյուր ամսվա հաշվարկված համախառն եկամտից, նախատեսված նվազեցումների և եկամտահարկի նոր դրույքաչափերի հիման վրա: Հարկային գործակալը ֆիզիկական անձին եկամուտ վճարող այն անձն է (կազմակերպությունը, անհատ ձեռնակատերը), ում վրա օրենքով դրված է պարտականություն այդ եկամուտներից հաշվարկել, պահել և բյուջե փոխանցել եկամտահարկ:

ՀՀ-ում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները: Ռեզիդենտ են համարվում այն անձինք, որոնք տասներկուամսյա ժամկետի ցանկացած ժամանակահատվածում գտնվել են ՀՀ-ում 83 օր և ավելի, կամ ուն կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի

կենտրոն է համարվում տուևը, բնակարանը, ընտանիքի գտնվելու վայրը, պրոֆեսիոնալ գործողության իրականացման վայրը:

Եթե անձը եկանտահարկի առունով ՀՀ ռեզիդենտ է, եկանտահարկը պետք է վճարվի Հայաստանում և Հայաստանից դուրս իր ստացած եկանտուններից: Եթե անձը ռեզիդենտ չէ, ապա նրա մոտ եկանտահարկի գծով պարտավորություն առաջանում է միայն Հայաստանում ստացված եկանտուններից:

Հայաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկանտունների հարկունը կատարվում է սահմանված ընդհանուր կարգով: Հայաստանյան աղբյուրներից ստացված եկանտուններ են համարվում՝

ա) Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրությունը և դրան

հավասարեցված այլ վճարումները;

բ) Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիա-իրավական պայմանագրերի կատարումից ստացված եկանտունը;

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից (արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից) ստացված եկանտունները;

դ) պասիվ եկանտուններ: Պասիվ եկանտուններ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից՝ իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրմամբ), Հայաստանի Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկանտունները, մասնավորապես՝ շահաբաժինները, տոկոսները, ռոյալթիները, Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկանտունը, Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելածը, փոխադրման ծառայությունների (ֆրախտ) դիմաց ստացված եկանտունները:

Հարկման ենթակա չէ ոչ ռեզիդենտին հայաստանյան աղբյուրներից վճարվող եկանտունը՝ կապված արտաքին տնտեսական գործունեության հետ: Արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստան ներկրելու հետ կապված (ապրանքների մաքսային փաստաթղթերի առկայության և տվյալ գործառնությունում միջնորդների բացակայության դեպքում) գործունեությունը, որի դեպքում Հայաստանի հարկային ռեզիդենտն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև ՀՀ պետական սահմանը հատելը:

Ոչ ռեզիդենտը սահմանված դեպքերում օգտվում է համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից:

Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա հայաստանյան աղբյուրներից պահված հարկի գումարների վերաբերյալ հարկային մարմինների կողմից տրվում է համապատասխան տեղեկանք՝ ՀՀ հարկային պետական ծառայության կողմից սահմանված ձևով և կարգով:

Հաճախ «ՀՀ ռեզիդենտ» հասկացությունը նույնացվում է «ՀՀ քաղաքացի» հասկացության հետ, մինչդեռ եկամտահարկի գծով ռեզիդենտ կարող են հանդիսանալ նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող / մասնավորապես փախստականի կարգավիճակ ունեցող/ անձինք, քանի որ վերը նշված երեք չափանիշներից որևէ մեկի առկայությամբ հնարավորություն է տալիս ճանաչվել անձին ՀՀ ռեզիդենտ և հակառակը:

Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունն է: Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Այդ իմաստով եկամուտներ են համարվում.

- աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները,
- ռոյալթիները ստացված եկամուտները,
- փոխատվության դիմաց ստացվող և այլ հատուցումը,
- շահաբաժինները,
- խաղատներում, շահումներով խաղերում ստացված եկամուտները,
- մրցույթների, վիճակախաղերի իրային, դրամական շահումները,
- նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- ժառանգության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- ապահովագրական հատուցումները,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը,
- գույքն օտարերկրց ստացված եկամուտը,
- վարձակալության դիմաց ստացվող վարձավճարները,
- իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից ֆիզիկական անձանց համար կատարված ապահովագրավճարները, բացառությամբ օրենքով

սահմանված պարտադիր սոցիալական  
ապահովագրության վճարների:

Բնամթերային տեսքով ստացված եկամուտները համախառն եկամտում հաշվի են առնվում հարկը պահելիս պետական հաստատագրված գներով, իսկ դրանց բացակայության դեպքում շուկայական գներով, արտարժույթով ստացված եկամուտների դեպքում՝ ստացման օրը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքին համապատասխան:

Եկամուտ չեն համարվում.

- պետական նպաստները /հղիության և ծննդաբերության, թաղման, երեխայի ծննդյան, գործազրկության, ընտանեկան նպաստները/, բացառությամբ անաշխատունակության նպաստի,
- զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողների և ՀՀ օրենսդրության համաձայն տրվող միանվագ վճարները,
- պետական կենսաթոշակները,
- արյուն և կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացած եկամուտները,
- ալիմենտները /ստացողների մոտ/:

Համախառն եկամտից կատարվող նվազեցումները լինում են նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցումներ և այլ նվազեցումներ: 2001թ. հունվարի 1-ից դադարեց գործել ֆիզիկական անձանցից անձնական լրացուցիչ նվազեցումների նախկին կարգը և բոլոր ֆիզիկական անձանց համար սահմանվեց նվազեցման միասնական գումար՝ յուրաքանչյուր ամսվա համար 20.000 դրամի չափով՝ նախկին 28.000 դրամի փոխարեն:

Տարվա ընթացքում անձնական նվազեցումը ՀՀ քաղաքացուն կարող է վերապահվել նրան եկամուտ վճարող հարկային գործակալի կողմից: Ընդ որում, հարկային գործակալը ֆիզիկական անձին եկամտի վճարման աղբյուրում հարկվող եկամուտներ վճարելիս, անձնական նվազեցումը իրականացնում է անկախ տվյալ ֆիզիկական անձին տվյալ ամսում վճարվող եկամուտներից այլ հարկային գործակալների կողմից այդ նվազեցման իրականացումից: Այսինքն, եթե ՀՀ աղաքացուն որևէ ամսում հաշվարկվում են եկամուտներ միաժամանակ մի քանի հարկային գործակալների կողմից, ապա յուրաքանչյուր հարկային գործակալ այդ անձի ամսական հարկվող եկամուտը որոշելիս իրականացնում է անձնական նվազեցում 20.000 դրամի չափով, ինչպես նաև կատարում նվազեցում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների չափով /ներկայումս այն

հաշվարկվում է աշխատողի ամսական աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների երեք տոկոսի չափով/:

### **Օրինակ.**

ՀՀ քաղաքացուն 2005 թ. մարտ ամսին հաշվարկվել է աշխատավարձ 65հազ. դրամ գումարով և երկրորդ կազմակերպությունում համատեղության կարգով աշխատանք կատարելու դիմաց 35հազ. դրամ գումարով: Տվյալ դեպքում մարտ ամսին այդ անձին հաշվարկված եկամուտներից յուրաքանչյուր գործակալի կողմից նախ հաշվարկվում է սոցիալական ապահովագրության հիմնադրամին երեք տոկոսի չափով հատկացումները, այնուհետև կատարվում 20.000 դրամի չափով անձնական նվազեցումը:

Հարկվող եկամուտը որոշելիս հարկատուի համախառն եկամտից նվազեցվում են.

- զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության, ինչպես նաև փրկարարական ծառայության ծառայողների ծառայության հետ կապված եկամուտները;
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում փոխհատուցման վճարները, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների: Օրենսդրությամբ նվազեցման նորմաներ սահմանված չլինելու դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է փաստաթղթերով հիմնավորված ծախսերի համար որպես փոխհատուցում ողջ գումարի չափով;
- Ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը և դրամական միջոցները;
- Օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները;
- Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց անհատույց տրվող գույքը և դրամական միջոցները;
- պարենային բավարարման արժեքը, ինչպես նաև այդ բավարարման փոխարեն վճարվող գումարները;
- անհատույց ստացված՝ օրենքով սահմանված կարգով շնորհ համարվող միջոցները;

- սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ֆիզիկական անձանց ստացած գումարները՝ բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացված գումարների;
- ֆիզիկական անձանց կողմից մասնավորեցման (սեփականաշնորհման) սերտիֆիկատները ձեռքբերելու և դրանք՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում մասնավորեցման սերտիֆիկատների անվանական արժեքի և դրանց ձեռքբերման գնի միջև դրական տարբերությունը;
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարվող, ինչպես նաև այն կրթաթոշակները;
- ապահովագրական հատուցումները;
- ֆիզիկական անձանց բանկային ավանդների, ավանդային սերտիֆիկատների (հավաստագրերի) համար հաշվեգրված և (կամ) վճարված տոկոսները կամ այլ հատուցումը;
- արժեթղթերից ստացված եկամուտը;
- այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են որպես վնասի փոխհատուցում, բացառությամբ կորցված եկամտի փոխհատուցման;
- աշխատանքից ազատման դեպքում վճարվող արձակման նպաստի գումարը;
- կենսաթոշակների կամավոր ապահովագրության պայմաններով վճարվող լրացուցիչ կենսաթոշակները;
- աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով վճարվող օգնության գումարները;
- ՀՀ ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթների և մրցությունների հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները;
- օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները.
- մրցույթներում և մրցություններում ստացված դրամական մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր վճարման դեպքում 10000 դրամի շրջանակներում.
- ֆիզիկական անձանց կողմից անհատական բնակարանային շինարարության նպատակով կառուցվող

չինությունների գրավադրման դիմաց ստացված նպատակային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսավճարները;

- ՀՀ կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10%-ի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները;
- պետական պարգևները (մրցանակները);
- ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հատուցած գումարները, բացառությամբ ավանդի գումարին հավելագրված և հատուցման ենթակա տոկոսների;
- ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման գումարները:

***Արժեթղթերից ստացված եկամուտների նվազեցումը:***

Հարկվող եկամուտը որոշելիս, եթե օչենսդրությամբ այլ բան սահմանված չէ, հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է՝

1. ստացված շահաբաժինների չափով: Շահաբաժին է համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում մասնակցությունից (բաժնեմասից, բաժնետոմսից, փայաբաժնից) ստացված եկամուտը,
2. գանձապետական պարտատոմսերից և պետական այլ արժեթղթերից՝ տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամտի չափով,
3. գանձապետական պարտատոմսերի և պետական այլ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով,
4. բաժնետոմսերի կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով:

Նախատեսված եկամուտները համախառն եկամտից չեն նվազեցվում, եթե՝

ա) ստացվում են որպես վճարման միջոց տրված մուրհակի, չեկի կամ վճարային այլ արժեթղթի օտարումից,

բ) իրականում ստացվում է որպես ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների դիմաց վարձատրություն կամ փոխարհում է նման վարձատրությամբ, անկախ արժեթղթի դիմաց իրական ներդրման կամ փոխատվության փաստի առկայությունից:

Անկախ ինվեստիցիոն բրոքեր կամ դիլեր համարվող հարկատուն կարող է իր համախառն եկամուտը նվազեցնել

սահմանված չափով, եթե հարկատուի գրանցամատյանում (կամ գործարքների գրանցման այլ տեղում) արժեթուղթը մինչև դրա ձեռքբերման աշխատանքային օրվա ավարտը գրանցվել է որպես ներդրման նպատակով ձեռքբերված արժեթուղթ կամ եթե վերջինս արժեթուղթը չի օտարում ձեռքբերման օրվանից հետո 24 ամսվա ընթացքում: Այս իմաստով օտարում է համարվում նաև արժեթուղթը գրավադրելը, օտարման իրավունքով լիազորագրային կառավարման հանձնելը, օտարման իրավունք նախատեսող լիազորագրով այլ անձին հանձնելը կամ որևէ այլ գործարքը, որը վկայում է դրա կատարման պահին արժեթղթի քողարկված փաստացի օտարումն այլ անձի:

Եթե հարկատուն նախատեսված նվազման իրավունք ունի և իր համախառն եկամտից նվազեցնում է արժեթղթի ձեռքբերման գինը, ապա նա իր համախառն եկամուտը կարող է նվազեցնել միայն տվյալ արժեթղթի ձեռքբերման գնի և իրացումից ստացված եկամտի (հասույթի) տարբերության չափով:

***Գյուղատնտեսական արտադրանքից ստացված եկամուտը:***

Հարկվող եկամուտը որոշելիս գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային զուտ եկամտի տվյալների վրա: Նշված արտոնությունը չի վերապահվում արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական գործունեություն իրականացնող հարկ վճարողների (ջերմոցային և զազանաբուծական տնտեսություններ, անասնապահական համալիրներ, ագրոկոմբինատներ, թռչնաբուծական ֆաբրիկաներ և այլն)՝ արդյունաբերական վերանշակում անցած գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի մասով: Գյուղատնտեսական գործունեության տարբերակումը ըստ արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական գործունեության՝ կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հայտանիշների հիման վրա:

***Կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության համար կատարված վճարները:***

Հարկվողը եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի հաշվին կատարվող կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության պարտադիր



վճարների գումարի չափով: Սահմանված նվազեցումը, օրենքով սահմանված դեպքերում, հաշվարկվում և իրականացվում է համախառն եկամտից նախապես նվազեցնելով եկամտի առանձին տեսակների ստացման հետ կապված սահմանված ծախսերի գումարը:

**Քարեգործական և այլ անհատույց հատկացումները:**

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հետևյալ կազմակերպությունների փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով, բայց հարկվող եկամտի հինգ տոկոսից ոչ ավելի.

ա/ հասարակական և կրոնական կազմակերպություններին, ՀՀ քաղաքական կուսակցություններին,

բ) համատիրություններին, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այն կազմակերպություններին, որոնք կազմակերպվել և գործում են բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, հասարակական անվտանգության նպատակով փորձարկման, շրջակա միջավայրի պաշտպանության, գրականության, մշակույթի և կրթության զարգացման ու քարոզման, սպառողների իրավունքների պաշտպանության, սիրողական սպորտի խթանման և կազմակերպման, տղամարդու, կանանց, երեխաների և ծերերի իրավունքների պաշտպանության նպատակներով,

գ) գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին,

դ) հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին:

Հարկվող եկամուտը որոշելիս, բացի նախատեսված նվազեցումներից, համախառն եկամուտը նվազեցվում է նաև ձեռնարկատիրական գործունեությունից և քաղաքացիական պայմանագրեր կատարելուց ստացված եկամուտների գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով՝ ֆիզիկական անձի կողմից ներկայացվող հայտարարագրերի հիման վրա: Քաղաքացիներից գանձվող եկամտահարկը պրոգրեսիվ հարկ է և հաշվարկումը կատարվում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսական հարկվող եկամուտը	Հարկի գումարը
Մինչև 80.000դրամ	Հարկվող եկամտի 10%-ը
80.000 դրամից ավելի	8000 դրամ գումարած 80.000

	դրամը գերազանցող գումարի 20%-ը
--	--------------------------------

Ռոյալթիների, գույքը վարձակալության տալուց, տոկոսներից եկամուտների դեպքում եկամտակախարկը հաշվարկվում է 10% դրույթաչափով՝ առանց սահմանված նվազեցումների:

Հարկային գործակալը վերը նշված դրույթաչափերով պարտավոր է հաշվարկել եկամտահարկ նաև օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվարկվող ամսական աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների գումարից, եկամուտների մնացած տեսակներից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույթաչափերով.

Եկամուտի տեսակը	Դրույթաչափը
ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական հատուցումների և փոխադրման (\$բախտի) դիմաց ստացված եկամուտներ	5%
ռոյալթիներ, տոկոսներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտներ, գույքի արժեքի հավելած և այլ պասիվ եկամուտներ, ինչպես նաև հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտներ	10%

Հարկային գործակալը պահված հարկը բյուջե է փոխանցում եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ:

**Օրինակ.**

Կազմակերպությունը իր չորս աշխատողներին հաշվարկել է աշխատավարձ համապատասխանաբար 18.000; 50.000; 90.000 և 120.000 դրամ գումարներով և եկամտահարկը հաշվարկել հետևյալ կերպ.

N	Ամսակա ն եկամու տը	Սոց.ապա հով. վճար	Անձնա կան նվազե ցում	Հարկվո ղ եկամու տ	Եկամտահար կի գումարը 6=5xեկամտ ահարկի համապատ. դրույթաչափ	Անձնական վճարման ենթակա գումար
		3=(2)×3%		5=2-3-4		7=2-(3+6)
1	2	3	4	5	6	7
I	18.000	540	20.000	-	-	17460
II	50.000	1500	20.000	28.500	2850	45.650

III	90.000	3000	20.000	67.000	6700	80.300
IV	120.000	3600	20.000	96.400	11.280	105.120

Որոշակի առանձնահատկություն ունի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հաշվարկման և վճարման կարգը: Հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամտի որոշման ժամանակ կիրառվում է հաշվառման հաշվեգրման եղանակը՝ իրավաբանական անձանց համար «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի համաձայն: Նախ հաշվարկվում են ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով կատարված ծախսերը, ներկայացվում դրանց հաշվարկման մեխանիզմները:

Ձեռնարկատիրական գործունեության դիմաց հարկի փաստացի գումարի վերջնական հաշվարկումը կատարում է հարկատուն և սահմանված կարգով այն արտացոլում տարեկան եկամուտների հայտարարագրում:

Ստացած եկամուտների մասին հայտարարագիր կարող են չներկայացնել այն անձինք, ովքեր տարվա ընթացքում ստացել են.

- նվազեցվող եկամուտներ /եկամտահարկի մասին օրենքի հոդված 9, 10, 11/,
- այնպիսի եկամուտներ, որոնցից եկամտահարկը հաշվարկելու և բյուջե փոխանցելու պարտավորությունը դրված է հարկային գործակալի վրա,
- եկամուտներ, եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարների ձևով հարկվող գործունեության տեսակներից եկամտահարկի այդ մասով,
- 250.000 դրամը չզերազանցող համախառն եկամուտ, որից հարկային գործակալի կողմից հարկի պահում չի իրականացվել:

Եթե անձը դասվում է հայտարարագիր չներկայացնողների թվին, նա պարտավոր է ներկայացնել իր բնակության /հաշվառման/ վայրի հարկային մարմնին տարվա ընթացքում իր ստացած հայտարարագրվող եկամուտների մասին հայտարարագիր: Հայտարարագիրը ներկայացվում է տարին ավարտվելուց հետո՝ մարտի մեկից ոչ ուշ, իսկ հայտարարագրի հիման վրա հաշվարկված եկամտահարկի գումարը վճարվում է բյուջե մինչև մայիսի մեկը:

Անչափահաս անձի եկամուտները պարտավոր է հայտարարագրել ծնողներից մեկը, կամ խնամակալը, ներկայացնելով առանձին հայտարարագիր անչափահասի անունով:

Տարեկան հարկվող եկամուտը որոշելիս ֆիզիկական անձը ինքնուրույնաբար կատարում է հայտարարագրվող համախառն

եկամտից օրենքով թույլատրելի նվազեցումները, ինչպես նաև եկամուտներից սոցիալական ապահովագրության հիմնադրամին կատարված հատկացումները:

Նշված կարգով որոշված տարեկան հարկվող եկամտի գումարից եկամտակհարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 960.000 դրամը	Հարկվող եկամտի 10%-ը
960.000 դրամից ավելի դեպքում	96.000 + 960.000 դրամը գերազանցող գումարի 20%-ը

Հայտարարագիրը հարկային մարմնին ներկայացնելուց հետո սխալներ հայտնաբերելու դեպքում հայտարարատուն երկու ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան հաշվարկված հարկի գումարը բյուջե փոխանցելը, իրավունք ունի ճշտումներ մտցնել հայտարարագրում արտացոլված տվյալներում:

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների նօուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տարվա ընթացքում եկամուտներ ստացող հարկատուն պարտավոր է կատարել կանխավճարներ: Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի 1/6-ի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ: Եռնարկատիրական գործունեությունը նոր սկսող հարկատուն կարող է եկամտահարկի կանխավճարներ չկատարել մինչև հաջորդ տարվա հունիսի 15-ը՝ այդ մասին նախօրոք տեղյակ պահելով հարկային համապատասխան մարմնին:

Տարվա ընթացքում ստացված եկամուտներից կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի միջոցով գանձված եկամտահարկի գումարները, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարված եկամտահարկի կանխավճարների գումարները հաշվի են առնվում /այսինքն հանվում են/ վերջնահաշվարկի ժամանակ, հայտարարագրի հիման վրա հաշվարկված տարեկան եկամուտների գումարից: Եթե վերջնահաշվարկի արդյունքը դրական է, այսինքն, եկամտահարկի լրավճարման գումար է առաջանում, ապա հարկի ռաջացած տարբերությանգումարը անձը վճարում է բյուջե մինչև մայիսի մեկը: Հակառակ դեպքում, առաջացած տարբերության գումարը

ենթակա է վերադարձման կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին:

Քաղաքացին իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից: Անհատ ձեռնարկատիրոջ կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ հիմնականում կիրառվում են օրենսդրությամբ առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները:

Անհատ ձեռնարկատիրոջ տարեկան եկամտահարկի վճարված գումարը չի կարող պակաս լինել 30.000 դրամից:

Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմիններին ՀՀ հարկային ծառայության սահմանած ձևով գրավոր տեղեկություններ ներկայացնել անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Նշված տեղեկությունները վերահասցեագրվում են եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմիններին: Կազմակերպության լուծարման, անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման դեպքում տեղեկությունները սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացվում են հարկային գործակալի կողմից լուծարման (գործունեության դադարեցման) մասին պետական գրանցում իրականացնող մարմինն դիմում տալու օրվանից 5-օրյա ժամկետում: Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այդ թվում գործատուն) պարտավոր է եռամսյակը մեկ, հաջորդ եռամսյակի երկրորդ ամսի 1-ից ոչ ուշ իր գտնվելու հարկային մարմինն ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված ձևով ներկայացնել հաշվարկ՝ անցած եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Հարկային գործակալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ամփոփ հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային տեսչության մարմիններ ներկայացնել ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Եկամտահարկի գծով խախտումների համար ֆիզիկական անձանց և հարկային գործակալների պատասխանատվությունը:

Խախտման համար հարկ վճարողները և հարկային գործակալները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Եկամտահարկը աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) դեպքում հարկային պարտավորությունը (այդ թվում՝ եկամտահարկը սահմանված ժամկետներում բյուջե չվճարելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) կրում է հարկային գործակալը: Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին 3 ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող 3 օրացուցային տարվա համար:

Հաշվետվությունները չներկայացնելու դեպքում կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը վճարում են տուգանք՝ հարկային մարմիններ չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 25000 դրամի չափով: Հարկային մարմին ներկայացված տարեկան եկամուտների մասին հայտարարագրում հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տրված վնասի 20%-ի չափով:

Եկամտահարկի մասին օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է ՀՀ հարկային տեսչությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ:

## 2.3 Հողի հարկ

Գյուղատնտեսության ոլորտում հողային հարաբերությունները կարգավորող այլ օրենքների ու նորմատիվային իրավական ակտերի հետ միասին կարևոր նշանակություն ունեցավ 1994թ փետրվարին «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

Հողի հարկը, որպես գույքային ուղղակի հարկ, հողի սեփականատերերի և պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողների կողմից պարտադիր վճարվող ստատիկ հարկ է, որի չափը կախված չէ

վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար՝ հաստատագրված վճարի ձևով, որը հաշվարկվում է տարվա համար: Վարձակալության դեպքում հողի հարկը գանձվում է վարձակալից:

Հողի հարկման օբյեկտի առումով հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն տարբերակվում է ըստ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի: Դրան համապատասխան գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է համարվում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար կադաստրային գնահատման արժեքը:

Հողի հարկի գծով սահմանված են հետևյալ դրույքաչափերը.

- գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական, ամառանոցային հողամասերը) համար հարկման օբյեկտի՝ կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտի 15%-ը,
- ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար.
  - ա) արդյունաբերության, տրանսպորտի, կապի, ռադիոհեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար հարկման օբյեկտի՝ կադաստրային գնահատման արժեքի.

- բնակավայրի ներսում 1%,

- բնակավայրից դուրս 0.5%,

բ) անտառային ֆոնդի հողերի (բացառությամբ դրանցում գտնվող գյուղատնտեսական հողատարածքների) համար սահմանվում է հողի կադաստրային գնահատման միջին արժեքի 1%-ի չափով,

գ) ոչ գյուղատնտեսական մյուս հողերի համար սահմանվում է հողի կադաստրային գնահատման արժեքի 1%-ի չափով:

Հարկման եթակա մակերեսներում ներառվում են շենքերը, շինությունները, դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները, սանիտարապահպան և տեխնիկական մյուս գոտիները և հարկի գծով հաշվարկները կատարում են հողակտորի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքի ձեռք բերման հաջորդ ամսից:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի հողի հարկի գծով սահմանված են հետևյալ արտոնությունները: Հողի հարկից ամբողջությամբ կամ մասնակի ազատվում են.

- բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, պետական արգելոցներն ու արգելավայրերը, բուսաբանական այգիները, զբոսայգիները, պատմամշակութային նշանակության հողերը՝ բացառությամբ վարձակալության տրված հողերի,
- հողային ռեֆորմի և սեփականաշնորհման գործընթացում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները հողի սեփականության իրավունքի ձեռք բերման ամսվանից սկսած հաջորդ երկու տարվա ընթացքում,
- բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը(հրապարակներ, փողոցներ, անցումներ, զբոսայգիներ, ջրամբարներ և այլն),
- մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին և դպրոցներին կից ուսումնարտադրական և փորձարարական հողամասերը,
- նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկիների լրիվ պտղաբերությունը՝ դրանց տարածքը 0,1 հեկտար և ավելի լինելու դեպքում,
- պետական անտառային ֆոնդի հողերը՝ բացառությամբ վարձակալության տրված գյուղատնտեսական հողերի,
- 50%-ով ազատվում են գիտահետազոտական հիմնարկները, ուսումնական հաստատությունները, սորտափորձարկման ձեռնարկությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտահարկի վճարումից ազատված քաղաքացիները՝ սեփականության իրենց պատկանող հողերի համար:

Հողի հարկի վճարման համար հիմք են հանդիսանում սեփականության, նշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը: Իրավաբանական անձինք հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և ոչ ուշ, քան տվյալ տարվա սեպտեմբերի մեկը հարկային մարմիններին են ներկայացնում հաշվարկներ հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի համար: Վճարումները կատարվում են եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակի հաջորդող ամսվա 25-ը: Քաղաքացիները և գյուղացիական տնտեսությունները հողի հարկը վճարում են հիմք ընդունելով տարածքային ինքնակառավարման մարմինների կողմից յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի մեկը հանձնված ծանուցագիրը: Վճարումը կատարում են հավասար



մասերով, ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը ներառյալ և մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը:

Հարկի վճարումը օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հարկատուին վճարում է տույժ չմարած հարկի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան 365օր: Հարկային մարմին ներկայացվող հաշվարկները սահմանված ժամկետից երկեւ ամսից ավել ուշացնելու դեպքում յուրաքանչյուր 15 օրվա համար գանձվում է տուգանք հարկի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան այդ հարկի գումարն է:

## 2.4 Գույքահարկ

Շուկայական տնտեսության անցումային փուլում ուղղակի իրական հարկերի կառուցվածքում իր առանձնահատուկ նշանակությունն ունի գույքահարկի գծով օրենսդրական դաշտի ձևավորումը: Ներկայումս գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1997թ. դեկտեմբերի 27-ին, վերջնականապես կարգավորվեցին գույքահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանվեցին գույքահարկ վճարողների շրջանակները, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, ինչպես նաև օրենսդրական դրույթները խախտողների նկատմամբ ցուցաբերվող մոտեցումների ձևերն ու եղանակները:

Օրենսդրությամբ գույքահարկը գույքի (շենքեր, շինություններ, փոխադրամիջոցներ) օգտագործողների կողմից համապատասխան բյուջեներ վճարվող ստատիկ հարկ է, որի չափը կախված է վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Որպես հարկատուներ (վճարողներ) հանդես են գալիս ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ տարածքային ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Եթե հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա յնրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

Եթե հարկվող օբյեկտն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա յուրաքանչյուրը իր բաժնի չափով է կրում պատասխանատվություն:

Գույքահարկով հարկվող օբյեկտ են հանդիսանում շենքերը և շինությունները՝ բնակելի նշանակության շինությունները, անհատական բնակելի տունը, բնակարանը բազմաբնակարան բնակելի շենքում, այգետնակը, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքը, ավտոտնակը, հասարակական նշանակության շինությունը, արտադրական նշանակության շինությունը և այլն (որոնց ցանկը տրված է օրենքի 4-րդ հոդվածի առաջին կետով), փոխադրամիջոցները՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը, մոտոցիկլետը (օրենքի 4-րդ հոդվածի երկրորդ կետ), իսկ հարկման բազան հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունն է կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սահմանված դրույքաչափերով հաշվարկվում է հարկի գումարը: շենքերի և շինությունների համար հարկման բազա է գնահատված կադաստրային արժեքը դրամական արտահայտությամբ, փոխադրամիջոցների համար՝ քաշող շարժիչի հզորությունը (ծիաուժ կամ կիլովատ):

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կադաստրային արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = Ամ \times U \times Գգ \times Գժ \times Գբ \times Գհ \times Գվ \times Գմ \times Գա$$

որտեղ՝

Ամ - ն բնակարանի մեկ քառակուսի մետրի արժեքն է, որը երկաթբետոնյա շինությունների համար սահմանված է 230,000 դրամ իսկ քարե շինությունների համար՝ 255,000 դրամ,

U - ն բնակարանի ընդհանուր մակերեսն է արտահայտված քառակուսի մետրերով,

Գգ - տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը, որը սահմանվել է ՀՀ կառավարության կողմից հետևյալ շրջանակներում.

Մարզ	Նվազագույնը	Առավելագույնը
Երևան քաղաք	0,17	1,0
Կոտայք	0,055	0,26
Արմավիր և Արարատ	0,044	0,32
Արագածոտն	0,035	0,32
Շիրակ	0,035	0,21
Լոռի	0,035	0,26
Տավուշ	0,035	0,17
Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք	0,035	0,13

- Գժ – ն բնակարանի ծածկի հետ կապված գործակիցն է, որը երկաթբետոնից ծածկի համար սահմանված է 1,0, իսկ փայտից ծածկի համար՝ 0,9,
- Գբ – ն բնակարանի բարձրության (ներքին չափերով) հետ կապված գործակիցն է, որը
- մինչև 2,7 մետր բարձրություն ունեցող բնակարանների համար սահմանված է 0,9,
  - 2,7 մետրից մինչև 3 մետրը՝ 1,0,
  - 3 մետր և ավելիի դեպքում՝ 1,1,
- Գհ – ն բնակարանի հարկի հետ կապված գործակիցն է, որը ըստ հարկերի սահմանված է հետևյալ կերպ.
- առաջին հարկի համար 0,95,
  - երկրորդից մինչև հինգերորդ հարկերի համար՝ 1.0,
  - վեցերորդից մինչև իններորդ հարկերի համար՝ 0.9,
  - տասներորդ և ավելի բարձր հարկերի համար՝ 0.8,
  - վերջին հարկի համար լրացուցիչ 0.95,
  - նկուղային հարկի համար՝ 0.5,
  - կիսանկուղային հարկի համար՝ 0.65,
  - ձեղնահարկի համար՝ 0.7,
- Գվ – ն շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է, որը սահմանված է
- 0 կարգի վնասվածության շինության համար՝ 1.0,
  - 1-ին և 2-րդ կարգի համար՝ 0.95,
  - 3-րդ կարգի համար՝ 0.5,
  - 4-րդ կարգի համար՝ 0.0,
- Գմ – ն շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է, որի համար սահմանված են հետևյալ գործակիցները
- 7-9 տարի շահագործման տևողություն ունեցող շինությունների համար՝ 1.0,
  - 10-12 տարի՝ 0,94,
  - 13-15 տարի՝ 0.91,
  - 16-18 տարի՝ 0.88,
  - 19-21 տարի՝ 0.85,
  - 22-24 տարի՝ 0,82,
  - 25-27 տարի՝ 0.79,
  - 28-30 տարի՝ 0.76,
  - 31-40 տարի՝ 0.73,
  - 41 տարի և ավելիի դեպքում 0.70,

- Գ<sub>ա</sub> –  $n$  շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է, որի գծով սահմանված է
- մինչև 50 տոկոս ավարտվածության աստիճանի համար 0.5,
  - 50-80 տոկոսի համար՝ 0.7,
  - 80 տոկոս և ավելիի համար՝ 1.0:

Անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների կադաստրային գնահատման արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U = [(U_1 + U_2 + \dots + U_n) + (U_p \times U_r \times Q_d) + (U_q \times D_q \times Q_d)] \times Q_9$$

որտեղ՝

$U_1, U_2, \dots, U_n$  –  $n$  առաջին, երկրորդ և հաջորդ հարկերի արժեքներն են, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$U_n = U_2 \times D_2 \times Q_h \times Q_6 \times Q_5 \times Q_{տ} \times Q_4 \times Q_{ահ} \times Q_4 \times Q_4$$

որտեղ՝

$U_2$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքն է, որի համար սահմանված է

Բազալտից շինությունների համար	95000 դրամ
Տուֆից շինությունների համար	85000 դրամ
Երկաթբետոնից շինությունների համար	65000 դրամ
Աղյուսից կամ սնամեջ մանր բլոկներից շինությունների համար	45000 դրամ
Փայտից շինությունների համար	50000 դրամ
Խամ քարից, կոպտատաշ քարից շինությունների համար	40000 դրամ

$D_2$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների ծավալն է (ներքին չափերով) արտահայտված խորանարդ մետրերով,

$U_p$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների բաց պատշգամբների մակերեսի արժեքն է, որի համար սահմանված է 5000 դրամ,

$U_r$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների բաց պատշգամբների մակերեսն է արտահայտված քառակուսի մետրերով,

Ապ-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրան կից պարիսպների մեկ խորանարդ մետրի ծավալի արժեքն է, որի գծով սահմանված են հետևյալ գումարները՝

Բազալտից պարսպի համար	20000 դրամ
Տուֆից պարսպի համար	18000 դրամ
Երկաթբետոնից պարսպի համար	15000 դրամ

Ծպ-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրան կից պարիսպների ծավալն է՝ արտահայտված խորանարդ մետրերով,

Գգ-ն՝ տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը

Գհ-ն՝ շինության հարկայնության հետ կապված գործակիցն է, որը ըստ հարկերի սահմանված է հետևյալ կերպ.

- առաջին և հաջորդ հարկերի հարկի համար՝ 1.0,
- նկուղային հարկի համար՝ 0.5,
- կիսանկուղային հարկի համար՝ 0.65,
- ձեղնահարկի համար՝ 0.7,

Գժ-ն՝ շինության ծածկի հետ կապված գործակիցն է,

Գմ-ն՝ շինության մաշվածությունը, որի գծով սահմանված է.

- մինչև 6 տարի շահագործման տևողություն ունեցող շինությունների համար՝ 1.0,
- 7-9 տարի 0.94,
- 10-12 տարի՝ 0.91,
- 13-15 տարի՝ 0.88,
- 16-18 տարի՝ 0.85,
- 19-21 տարի՝ 0.82,
- 22-24 տարի՝ 0.79,
- 25-27 տարի՝ 0.76,
- 28-30 տարի՝ 0.73,
- 31-40 տարի՝ 0.70,
- 41 տարի և ավելիի դեպքում 0.60,

Գտ-ն՝ շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցն է, կղմինդրից տանիքի համար սահմանված է 1.05, թիթեղից տանիքի համար՝ 1.0, թեթաքարից (շիֆերից) տանիքի համար՝ 0.9, այլ նյութից տանիքի համար՝ 0.85,

Գն-ն՝ շինության օգտագործման նշանակության հետ կապված գործակիցն է, բնակելի շենքի և այգետնակի համար 1.0 իսկ կից օժանդակ շնությունների համար 0.5,

Գահ-ն՝ շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցն է,  
 Գվ-ն՝ շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,  
 Գա-ն՝ շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է  
 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կադաստրային արժեքը որոշվում է հետոյալ բանաձևով.

$$U = U_n \times U \times Q_a \times Q_b \times Q_p \times Q_h \times Q_v \times Q_n \times Q_a$$

որտեղ՝

U<sub>n</sub> - ն բնակարանի մեկ քառակուսի մետրի արժեքն է, որը երկաթբետոնյա շինությունների համար սահմանված է 230,000 դրամ իսկ քարե շինությունների համար՝ 255,000 դրամ,

U - ն բնակարանի ընդհանուր մակերեսն է արտահայտված քառակուսի մետրերով,

Q<sub>a</sub> - տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը, որը սահմանվել է ՀՀ կառավարության կողմից հետևյալ շրջանակներում.

Մարզ	Նվազագույնը	Առավելագույնը
Երևան քաղաք	0,17	1,0
Կոտայք	0,055	0,26
Արմավիր և Արարատ	0,044	0,32
Արագածոտն	0,035	0,32
Շիրակ	0,035	0,21
Լոռի	0,035	0,26
Տավուշ	0,035	0,17
Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք	0,035	0,13

Q<sub>b</sub> - ն բնակարանի ծածկի հետ կապված գործակիցն է, որը երկաթբետոնից ծածկի համար սահմանված է 1,0, իսկ փայտից ծածկի համար՝ 0,9,

Q<sub>p</sub> - ն բնակարանի բարձրության (ներքին չափերով) հետ կապված գործակիցն է, որը

- մինչև 2,7 մետր բարձրություն ունեցող բնակարանների համար սահմանված է 0,9,
- 2,7 մետրից մինչև 3 մետրը՝ 1,0,
- 3 մետր և ավելիի դեօբում՝ 1,1,

Գհ – ն բնակարանի հարկի հետ կապված գործակիցն է, որը ըստ հարկերի սահմանված է հետևյալ կերպ.

- առաջին հարկի համար 0,95,
- երկրորդից մինչև հինգերորդ հարկերի համար՝ 1.0,
- վեցերորդից մինչև իններորդ հարկերի համար՝ 0.9,
- տասներորդ և ավելի բարձր հարկերի համար՝ 0.8,
- վերջին հարկի համար լրացուցիչ 0.95,
- նկուղային հարկի համար՝ 0.5,
- կիսանկուղային հարկի համար՝ 0.65,
- ձեղնահարկի համար՝ 0.7,

Գվ – ն շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է, որը սահմանված է

- 0 կարգի վնասվածության շինության համար՝ 1.0,
- 1-ին և 2-րդ կարգի համար՝ 0.95,
- 3-րդ կարգի համար՝ 0.5,
- 4-րդ կարգի համար՝ 0.0,

Գճ – ն շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է, որի համար սահմանված են հետևյալ գործակիցները

- 7-9 տարի շահագործման տևողություն ունեցող շինությունների համար՝ 1.0,
- 10-12 տարի՝ 0,94,
- 13-15 տարի՝ 0.91,
- 16-18 տարի՝ 0.88,
- 19-21 տարի՝ 0.85,
- 22-24 տարի՝ 0,82,
- 25-27 տարի՝ 0.79,
- 28-30 տարի՝ 0.76,
- 31-40 տարի՝ 0.73,
- 41 տարի և ավելիի դեպքում 0.70,

Գա – ն շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է , որի գծով սահմանված է

- մինչև 50 տոկոս ավարտվածության աստիճանի համար 0.5,
- 50-80 տոկոսի համար՝ 0.7,
- 80 ընկոս և ավելիի համար՝ 1.0:

Անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների կադաստրային գնահատման արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով

$$U = [(U_1+U_2+....+U_n) + (U_p \times U_p \times Q_d) + (U_q \times \bar{O}q \times Q_d)] \times Q_q$$

որտեղ՝

$U_1, U_2, \dots, U_n$  – ն առաջին, երկրորդ և հաջորդ հարկերի արժեքներն են, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$U_n = U_2 \times \bar{O}2 \times Q_h \times Q_0 \times Q_d \times Q_{տ} \times Q_n \times Q_{ահ} \times Q_վ \times Q_{ա}$$

որտեղ՝

$U_2$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքն է, որի համար սահմանված է

Բազալտից շինությունների համար	95000 դրամ
Տուֆից շինությունների համար	85000 դրամ
Երկաթբետոնից շինությունների համար	65000 դրամ
Աղյուսից կամ սնամեջ մանր բլոկներից շինությունների համար	45000 դրամ
Փայտից շինությունների համար	50000 դրամ
Խամ քարից, կոպտատաշ քարից շինությունների համար	40000 դրամ

$\bar{O}2$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների ծավալն է (ներքին չափերով) արտահայտված խորանարդ մետրերով,

$U_p$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների բաց պատշգամբների մակերեսի արժեքն է, որի համար սահմանված է 5000 դրամ,

$U_p$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների բաց պատշգամբների մակերեսն է արտահայտված քառակուսի մետրերով,

$U_q$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրան կից պարիսպների մեկ խորանարդ մետրի ծավալի արժեքն է, որի գծով սահմանված են հետևյալ գումարները՝

Բազալտից պարսպի համար	20000 դրամ
Տուֆից պարսպի համար	18000 դրամ
Երկաթբետոնից պարսպի համար	15000 դրամ

$\bar{O}q$ -ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրան կից պարիսպների ծավալն է՝ արտահայտված խորանարդ մետրերով,



- Գգ-ն՝ տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը
- Գհ-ն՝ շինության հարկայնության հետ կապված գործակիցն է, որը ըստ հարկերի սահմանված է հետևյալ կերպ.
- առաջին հաջորդ հարկերի հարկի համար՝ 1.0,
  - նկուղային հարկի համար՝ 0.5,
  - կիսանկուղային հարկի համար՝ 0.65,
  - ձեղնահարկի համար՝ 0.7,
- Գծ-ն՝ շինության ծածկի հետ կապված գործակիցն է,
- Գմ-ն՝ շինության մաշվածությունը, որի գծով սահմանված է.
- մինչև 6 տարի շահագործման տևողություն ունեցող շինությունների համար՝ 1.0,
  - 7-9 տարի 0.94,
  - 10-12 տարի՝ 0.91,
  - 13-15 տարի՝ 0.88,
  - 16-18 տարի՝ 0.85,
  - 19-21 տարի՝ 0.82,
  - 22-24 տարի՝ 0.79,
  - 25-27 տարի՝ 0.76,
  - 28-30 տարի՝ 0.73,
  - 31-40 տարի՝ 0.70,
  - 41 տարի և ավելիի դեպքում 0.60,
- Գտ-ն՝ շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցն է, կղմինդրից տանիքի համար սահմանված է 1.05, թիթեղից տանիքի համար՝ 1.0, թեթաքարից (շիֆերից) տանիքի համար՝ 0.9, այլ նյութից տանիքի համար՝ 0.85,
- Գն-ն՝ շինության օգտագործման նշանակության հետևյալ կապված գործակիցն է, բնակելի շենքի և այգետնակի համար 1.0 իսկ կից օժանդակ շինությունների համար 0.5,
- Գահ-ն՝ շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցն է,
- Գվ-ն՝ շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,
- Գա-ն՝ շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է
- Գույքահարկի հաշվարկման համար հարկման բազայի նկատմամբ սահմանված են հետևյալ դրույթաչափերը:
1. շինությունների գծով՝ (բացառությամբ հասարակական և արտադրական նշանակության շենքերի, որոնց համար

նախատեսցված է հարկման բազայի նկատմամբ միասնական 0,3% տարեկան դրույթաչափը).

Հարկման բազան	Հարկի դրույթաչափը
մինչև 3 մլն. դրամ	0%
3 մլն. դրամից մինչև 10 մլն. դրամ	100 դրամ գումարած հարկման բազայի 3 մլն. դրամը գերազանցող գումարի 0,1%
10 մլն. դրամից մինչև 20 մլն. դրամ	7100 դրամ գումարած հարկման բազայի 10 մլն. դրամը գերազանցող գումարի 0,2%
20 մլն. դրամից մինչև 30 մլն. դրամ	27100 դրամ գումարած հարկման բազայի 20 մլն. դրամը գերազանցող գումարի 0,4%
30 մլն. դրամից մինչև 40 մլն. դրամ	67100 դրամ գումարած հարկման բազայի 30 մլն. դրամը գերազանցող գումարի 0,6%
40 մլն. դրամից ավելի	127100 դրամ գումարած հարկման բազայի 40 մլն. դրամը գերազանցող գումարի 1%

- ավտոտնակների համար՝ հարկման բազայի 0,2%:

2. Փոխադրամիջոցների գծով.

- ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ դրույթաչափերով՝
  - մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան
    - ա/ 1 ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար 200 դրամ,
    - բ/ 121 ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար 300 դրամ. ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար 1000 դրամ,
    - գ/ 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար 500 դրամ. ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար 1000 դրամ,
  - 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան
    - ա/ 1 ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար 100 դրամ,
    - բ/ 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար 200 դրամ:

3. Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:

4. Ջրայն փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:

5. Մինչև երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով: Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարուն հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է 10 տոկոսով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը: Վաղեմության ժամկետը որոշելիս հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

6. Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետը 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում: Փոխադրամիջոցների հարկման բազան կիլովատերով արտահայտված լինելու դեպքում հարկի տարեկան գումարը որոշվում է համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1,36 գործակից:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են հետևյալ արտոնությունները՝

- գույքահարկից ազատվում են ՀՀ օրենսդրության համապատասխան գծային ինժեներատրանսպորտային շինությունները, եթե դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում
- ջրամբարները,
- պատմամշակութային նշանակության հարկվող օբյեկտ համարվող շինությունները ՀՀ կառավարության սահմանած ցանկին համապատասխան,
- ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված, ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած անձանց (ընանիքի անդամներին) պատկանող գույքը, մինչև այդ անձանց զավակներից մեկի տասնութ տարին լրանալը,
- ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են ՀՀ զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

Վերը նշված արտոնություններից բացի ՀՀ կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ, որի ընդհանուր գումարը չի

կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների տաս տոկոսը:

Կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա եռամսյակը: Գույքահարկի հաշվարկված գումարները կազմակերպությունների կողմից համապատասխան բյուջե են վճարվում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա մեկը ներառյալ:

Ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին: Ֆիզիկական անձինք գույքահարկը վճարում են ամբողջ տարվա համար մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի մեկը ներառյալ, բացառությամբ փոխադրամիջոցների համար, որոնց հարկային պարտավորությունները ամբողջությամբ կատարվում են մինչև փոխադրամիջոցների տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը՝ օգոստոսի 1-ը:

Գույքահարկ վճարողներին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտի համար գույքահարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի ամբողջ արժեքից և գույքահարկի հաշվարկված գումարը վճարվում է՝

- ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ յուրաքանչյուր համասեփականատիրոջ կողմից՝ իր բաժնի մասով կամ նրանցից մեկի կողմից.
- ընդհանուր համատեղ սեփականության դեպքում՝ մեկ համասեփականատիրոջ կողմից,
- եթե ընդհանուր համատեղ սեփականության դեպքում գույքահարկ վճարող համասեփականատերերից մեկը կազմակերպություն է, ապա անկախ վերը նշված 2-րդ կետից կազմակերպության կողմից:

Հարկի վճարումը օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հարկատուն վճարում է տույժ չմարած հարկի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան 365օր: Հարկային մարմին ներկայացվող հաշվարկները սահմանված ժամկետից երկու ամսից ավել ուշացնելու դեպքում յուրաքանչյուր 15 օրվա համար գանձվում է տուգանք հարկի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան այդ հարկի գումարն է:

## Թեստեր և խնդիրներ

### 1. Շահութահարկ

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է.

ա. գույքի պատահական կորուստների չափով,

բ. ստացված շահաբաժինների գումարի չափով,

գ. հիմնական միջոցների վրա կատարված ամորտիզացիոն մասհանումների չափով,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

2. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է.

ա. առևտրային գործունեություն իրականացնող հարկատուների մոտ ապրանքների ձեռքբերման արժեքի չափով՝ ձեռք բերման տարվա ընթացքում,

բ. ծառայության երաշխիքային ժամկետ ունեցող արտադրատեսակների ապրանքների երաշխիքային նորոգման և սպասարկման ծախսերը,

գ. վարձակալական պայմանագրի փաստացի դադարեցման դեպքում հիմնական միջոցի չամորտիզացված մնացորդի չափով՝ վարձատուի մոտ,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

3. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտից նվազեցվում են.

ա. ծառայությունների դիմաց բանկի վճարած միջնորդական վճարների չափով,

բ. ապահովագրական կազմակերպությունների կողմից կանխարգելիչ միջոցառումների պահուստների մասհանումների չափով,

գ. բանկի գործունեությունը ապահովելու համար պլաստիկային քարտերի ներդրման հետ կապված ծախսերի չափով,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

4. Ինչպիսի արտոնություններ են գործում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով.

ա. հարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնություն,

բ. հարկի գումարի նվազեցման արտոնություն,

գ. հարկի հաշվարկման ժամկետի հետաձգման արտոնություն,

- դ. «ա» և «բ» կետերում նշվածները:*
5. Ծախս չհամարվող տարրերը.  
 ա. օրենքով սահմանված կարգով հիմնական միջոցների վերագնահատման բացասական արդյունքը,  
 բ. այն եկամուտների ստացման հետ կապված ծախսերը, որոնք միաժամանակ նվազեցվում են համախառն եկամուտից,  
 գ. «ա» և «բ» կետերում նշվածները,  
 դ. ճիշտ պատասխանը նշված չէ:
6. Ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հարկվող շահույթը որոշելիս վերջինիս համախառն եկամտից չեն նվազեցվում.  
 ա. անհայտուց ստացված ակտիվները օրենքով սահմանված կարգով,  
 բ. ստացված վնասները (նախորդ երեք տարվա կտրվածքով),  
 գ. իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցությունից ստացված եկամուտները,  
 դ.. բոլոր պատասխանները ճիշտ են:
7. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտից նվազեցվում են.  
 ա. բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետազոտման և նախագծահետազոտական աշխատանքների վրա հարկատուի կատարած ծախսերը՝ այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին,  
 բ. գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարած ծախսերը՝ ոչ նյութական ակտիվների համար սահմանված կարգով,  
 գ. սահմանված չափը չգերազանցող գիշերավարձի ծախսերը առանց հիմնավորող փաստաթղթերի,  
 դ. ճիշտ պատասխանը նշված չէ:
8. Ինչպիսի ժամկետ է սահմանված շահութահարկի վճարման համար.  
 ա. ՀՀ-ում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի համար՝ հարկային մարմնի կողմից վճարման ծանուցագիրը ստանալուց մեկ ամսվա ընթացքում,  
 բ. ՀՀ-ում ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտ հարկային գործակալի կողմից եկամուտներ վճարելիս՝ վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ,  
 գ. «ա» և «բ» կետերում նշվածները,  
 դ. ճիշտ պատասխանը նշված չէ:
9. Ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնելիս վերջինիս կողմից անհատույց ստացված ակտիվները.  
 ա. համարվում է եկամուտ չհամարվող տարր,

բ. ներառվում են համախառն եկամտի կազմում այն չափով, ինչքանով որ ճանաչվում են որպես ծախս,

գ. *ներառվում են համախառն եկամտի կազմում դրանց ստացման հաշվետու տարում:*

10. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են .

ա. վարչական նշանակության հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով տվյալ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից ելնելով,

բ. բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետախուզական աշխատանքների վրա հարկատուի կատարած ծախսերի չափով այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին,

գ. *հաշվետու տարում հայտնաբերված՝ նախորդ տարում ավել ցույց տրված եկամտի չափով,*

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

11. Հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների.

ա. 150 տոկոսի չափով, ընդ որում առանձին նվազեցվում է նաև աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների,

բ. 150 տոկոսի չափով, ընդ որում այս գումարի մեջ մտնում է նաև տվյալ աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների նկատմամբ հաշվարկված 13 տոկոս սոցապահովության վճարները,

գ. ճիշտ պատասխանը նշված չէ:

12. Նշված դրույթներից որն է ճիշտ («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք).

ա. ծախսերի թվին են դասվում հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը,

բ. հարկման նպատակով շինությունների անվճար տրամադրման ծախսերը համապատասխան եկամտից չնվազեցվող ծախսերն են,

գ. հարկման նպատակով փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը առանց բացառության համախառն եկամտից չնվազեցվող ծախս են,

դ. «ա» և «բ» կետերում նշվածները:

13. Ինչպես են նվազեցվում հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը.

ա. չեն նվազեցվում, եթե կատարվել են վարձակալված հիմնական միջոցի վրա,

բ. ընթացիկ տարվա (ծառայության երկրորդ տարի) հունվարի 1-ի դրությամբ 400.0 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով սարքավորման վրա կատարված 200.0 հազար դրամ ծախսը, նույն տարում,

գ. ճիշտ պատասխանը նշված չէ:

14. Ինչպիսի ժամկետ է սահմանված շահութահարկի հաշվարկի ներկայացման համար.

ա. մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը,

բ. մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը,

գ. մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը:

15. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում.

ա. բանկային երաշխիքների տրամադրման գծով ստացվող եկամուտները,

բ. անվավեր ճանաչված գործարքներից ստացվող միջոցները,

գ. անհատույց ստացված ակտիվները և ծառայությունները,

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

16. Հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում.

ա. հաշվեկշռային արժեքով, բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների,

բ. սկզբնական (ծեռքբերման) արժեքով, բացառությամբ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների,

գ. կամայական կարգով իրականացված վերագնահատման արդյունքների,

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

17. Հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի կողմից տոկոսների, գույքի արժեքի հավելաճի տեսքով ստացված եկամուտներից վճարման աղբյուրի մոտ հարկային գործակալը շայիութահարկը պահում (գանձում) է հետևյալ չափերով՝

ա. 10 տոկոս դրույքաչափով

բ. տոկոսները՝ 0 տոկոս դրույքաչափով, գույքի արժեքի հավելաճի տեսքով ստացած եկամուտները՝ 3 տոկոս դրույքաչափով,

գ. 5 տոկոս դրույքաչափով,

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

18. ՀՀ-ում հարկատուի եկամտի գումարից գանձված շահութահարկը նվազեցվում է շահութահարկի այն գումարի չափով, որը գանձվել է ռեզիդենտներից օտարերկրյա պետություններում նրանց օրենսդրության համապատասխան.

ա. այո,



*բ. այդ, սակայն տվյալ տարում նվազեցվող շահութահարկի գումարը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան վճարման ենթակա շահութահարկի գումարը,*

գ. ոչ:

19. Որ խմբի հիմնական միջոցների համար է սահմանված ամորտիզացիոն մասհանումների 5 տարվա նվազագույն ժամկետ.

ա. փոխանցող հարմարանքների համար

*բ. այլ հիմնական միջոցներ, բանող անասունների, բազմանյա տնկիների և հողի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար,*

գ. համակարգչային տեխնիկայի համար:

20. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նվազագույն շահութահարկը հաշվարկվում է.

*ա. նախորդ ամսվա ընթացքում ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (առանց անուղղակի հարկերի) և նույն ժամանակաշրջանում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ մեկ տոկոս դրույքաչափով,*

*բ. նախորդ ամսվա ընթացքում ապրանքների իրացումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (առանց անուղղակի հարկերի) և նույն ժամանակաշրջանում այդ եկամտի 35 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ երկու տոկոս դրույքաչափով,*

*գ. նախորդ ամսվա ընթացքում սեփական արտադրության իրացումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (առանց անուղղակի հարկերի) և նույն ժամանակաշրջանում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ երեք տոկոս դրույքաչափով:*

21. Եկամտահարկի գծով կանխավճարների մուծումները կատարվում են.

ա. յուրաքանչյուր ամիս,

բ. յուրաքանչյուր եռամսյակ,

գ. կիսմյակը մեկ անգամ:

22. Եկամտահարկի գծով կանխավճարների մուծումները կատարվում են նախորդ տարվա փաստացի եկամտի.

ա. 1/2-ի չափով,  
բ. 1/4-ի չափով,  
գ. 1/16-ի չափով,  
դ.. 1/6-ի չափով:

## 2. Եկամտահարկ

1. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն որ եկամուտներն են նվազեցվում համախառն եկամտից.  
*ա. պարենային բավարարման արժեքը,*  
բ. զոհված զինծառայողների ընտանիքի անդամների ՀՀ օրենսդրությանը համաձայն տրվող միանվագ վճարները,  
գ. «ա» և «բ» կետերում նշվածները,  
դ. ՀՀ օրենսդրությանը համապատասխան վճարվող ալիմենտները (ապրուստավճարները):
2. Եկամուտներ վճարելիս որ դեպքերում հարկային գործակալը պարտավոր չէ իրականացնել եկամտահարկի պահում.  
*ա. եթե եկամուտները ձեռնարկատիրական գործունեության արդյունք են,*  
բ. խտացվել են նրցույթներին ու նրցություններին մասնակցելու և հաղթելու դեպքում,  
գ. խտացվել են խաղատներում,  
դ. բոլոր պատասխանները ճիշտ են:
3. Եկամուտների թվին չեն դասվում.  
*ա. ժառանգության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,*  
բ. ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող գույքն օտարելուց ստացված միջոցները,  
գ. տոկոսները,  
դ. ՀՀ օրենսդրության համաձայն վճարվող բոլոր տեսակի կենսաթոշակները:
4. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն որ եկամուտները չեն նվազեցվում համախառն եկամտից.  
*ա. կորցված եկամտի փոխհատուցման գումարները,*  
բ. ապահովագրական հատուցումները,  
գ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող վիճակախաղերի մասնակիցների իրային շահումները,  
դ. պետական պարգևները:
5. Որ դեպքերում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք պարտավոր կատարել ամսական եկամտահարկի վճարներ.

*ա. եթե ֆիզիկական անձինք եկամուտներ են ստացել ՀՀ-ում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններից,*

*բ. ֆիզիկական անձինք եկամուտներ են ստացել ՀՀ-ում բարեգործական կազմակերպությունների ներկայացուցչություններից,*

*գ. «ա» և «բ» կետերում նշվածները,*

*դ. ճիշտ պատասխանը նշված չէ:*

6. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն որ եկամուտները չեն նցազեցվում համախառն եկամտից.

*ա. ՀՀ կառավարության սահմանած չափը գերազանցող օրապահիկի ծախսերը՝ անկախ դրանց փաստաթղթերի հիմնավորման հանգամանքի,*

*բ. ՀՀ կառավարության կողմից բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի տասը տոկոսի ուսուցման տարեկան վարձի փոխհատուցման գումարները,*

*գ. պարենային բավարարման փոխարեն վճարվող գումարները,*

*դ. ճիշտ պատասխանը նշված չէ:*

7. Որ հարկատուներն են պարտավոր ներկայացնել եկամտահարկի տարեկան հայտարարագրեր.

*ա. բացառապես միևնույն հարկային գործակալից եկամուտներ ստացվող այն ֆիզիկական անձինք, որոնց եկամուտները վճարման աղբյուրի մոտ հարկվել են,*

*բ. հարկային տարվա ընթացքում եկամուտներ ստացած անչափահաս ֆիզիկական անձինք ծնողների կողմից,*

*գ. բացառապես կերարտադրությամբ զբաղվող հարկատուները,*

*դ. ճիշտ պատասխանը նշված չէ:*

8. Հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են.

*ա. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական ձևով ցույց տրվող օգնության գումարները,*

*բ. ՀՀ օրենսդրության համաձայն վճարվող ժամանակավոր անաշխատունակության և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստները,*

*գ. ստացված շահաբաժինները, եթե դրանք ստացվել են որպես աշխատանքների դիմաց վարձատրություն,*

*դ. «ա» և «գ» կետերում նշվածները:*

9. Բարեգործական հատկացումները համախառն եկամտից նվազեցվում են.

ա. ՀՀ քաղաքական կուսակցություններին փոխանցված ապրանքի արժեքի չափով, եթե այն չի գերազանցում հարկատուի համախառն 5 տոկոսը,

բ. հանրակրթական դպրոցին տրամադրված դրամական միջոցների չափով, որը կազմում է հարկատուի համախառն եկամտի 2 տոկոսը, հարկվող եկամտի 6 տոկոսը,

գ. չեն իրականացվում համատիրություններին տրամադրված դրամական միջոցների դրամական միջոցների չափով, եթե տարվա ընթացքում այն կրկնվող բնույթ է ստանում,

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

10. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն որն է համարվում հարկվող օբյեկտ ոչ ռեզիդենտի համար.

ա. ՀՀ աղբյուրներից ստացված շահաբաժինները,

բ. ՀՀ աղբյուրներից ստացված ռոյալթիները,

գ. ՀՀ-ում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելածը,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

11. Համախառն եկամտից ածնական նվազեցման չափը ըստ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի.

ա. յուրաքանչյուր ամսվա համար 15 հազար դրամ

բ. յուրաքանչյուր ամսվա համար 20 հազար դրամ

գ. յուրաքանչյուր ամսվա համար 38 հազար դրամ

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

12. Գյուղատնտեսական արտադրությանը զբաղվող հարկատուների համախառն եկամուտը նվազեցվում է.

ա. գյուղատնտեսական արտադրանքի իրացումից եկամտի չափով, ինչպես նաև՝ այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով,

բ. գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև՝ այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը չի գերազանցում ընդհանուր եկամտի 5 տոկոսը,

գ. գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև՝ այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը չի գերազանցում ընդհանուր եկամտի 15 տոկոսը,

դ. «բ» և «գ» կետերում նշվածները:

13. Օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց ինչպիսի եկամուտներ վճարվելիս է հարկի գումարը հաշվարկվում 5% դրույքաչափով.

ա. ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտներ,

*բ. ապահովագրությունից ստացված ապահովագրական հատկացումներ և փոխադրման դիմաց ստացված եկամուտներ, գ. «ա» և «բ» կետերում նշվածները*

14. Որ անհատ ձեռնարկատերերն են հանդիսանում եկամտահարկի կանխավճարներ վճարող.

*ա. որոնց նախորդ տարվա ընթացքում վճարված եկամտահարկի գումարը գերազանցում է 50.0 հազ. դրամը,*

*բ. որոնց նախորդ տարվա հարկվող եկամտի գումարը գերազանցում է 500.0 հազ. դրամը,*

*գ. որոնց նախորդ տարվա ձեռնարկատիրական գործունեության գծով հաշվարկված եկամտահարկի գումարը գերազանցում է 100.0 հազար դրամը,*

*դ. ճիշտ պատասխանը նշված չէ:*

15. ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների աշխատանքի վարձատրությունից և դրական հավասարեցված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում և պահվում է.

*ա. եկամուտը վճարող հարկային գործակալի կողմից օրենքի 18-րդ հոդվածի առաջին կետի դրույքաչափով, առանց անձնական նվազեցումներ կատարելու,*

*բ. եկամուտ վճարող հարկային գործակալի կողմից 15% դրույքաչափով, հաշվի առնելով անձնական նվազեցումները,*

*գ. եկամուտների մասին տարեկան հայտարարագրի հիման վրա:*

16. Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց եկամուտներից չպահված հարկի գումարները.

*ա. ենթակա են ֆիզիկական անձանցից պահման ոչ ավելի, քան վերջին 3 տարվա համր,*

*բ. ենթակա են ֆիզիկական անձանցից պահման՝ առանց ժամկետային սահմանափակումների,*

*գ. ենթակա են պահման հարկային գործակալից, եթե փաստը հայտնաբերվել է եկամուտների վճարումից 3 ամիս անց,*

*դ. ճիշտ պատասխանը նշված չէ:*

17. Ինչպիսի ժամկետ է սահմանված անհատ ձեռնարկատերերի հայտարարագրերի ներկայացման համար («եկամտահարկի մասին» ՀՀ օրենք).

*ա. հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ,*

*բ. հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ,*

*գ. հաջորդ տարվա մայիսի 1-ից ոչ ուշ,*

*դ. ճիշտ պատասխանը նշված չէ:*

18. «եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հաշվառման պահը.

*ա. կատարված աշխատանքների և ծառայությունների դիմաց պատվիրատուի կողմից վճարի փոխանցման օրը,*

բ. կատարված աշխատանքների և ծառայությունների դիմաց  
անհատ ձեռնարկատիրոջ կողմից վճարի ստացման պահը,  
գ. *անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարված  
աշխատանքների և ծառայությունների պատվիրատուին  
հանձնելու պահը:*

19. Հայաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից  
հայաստանյան աղբյուրներից ստացված պասիվ եկամուտներ են  
համարվում.

ա. ՀՀ-ում աշխատանքի վարձատրությունը,

բ. ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից ծառայությունների մատուցու-  
մից ստացված եկամուտները,

գ. շահաբաժինները, տոկոսները:

20. Ֆիզիկական անձին 120.000 դրամ աշխատավարձ  
հաշվարկելիս հարկային գործակալը եկամտահարկի գումարը  
հաշվարկում է.

ա. 10 տոկոս դրույքաչափով,

բ. 15 տոկոս դրույքաչափով,

գ. 20 տոկոս դրույքաչափով,

դ. 30 տոկոս դրույքաչափով:

21. Եկամտահարկի գծով կանխավճարների մուծումները  
կատարվում են.

ա. յուրաքանչյուր ամիս,

բ. *յուրաքանչյուր եռամսյակ,*

գ. կիսմյակը մեկ անգամ:

22. Եկամտահարկի գծով կանխավճարների մուծումները  
կատարվում են նախորդ տարվա փաստացի եկամտի.

ա. 1/2-ի չափով,

բ. 1/4-ի չափով,

գ. 1/6-ի չափով,

դ. 1/16-ի չափով:

### 3. Գույքահարկ և հողահարկ

1. Հողի հարկը հաշվարկվում է սկսած հողակտորի  
սեփականության մշտական կամ ժամանակավոր օգտագործման  
իրավունքի ձեռքբերման.

ա. *հաջորդ ամսից,*

բ. ամսից,

գ. հաջորդ եռամսյակից:

2. Հողի հարկից ազատվում են.

- ա. ՀՀ-ում վերաբնակվող ընտանիքներին նշտական օգտագործման իրավունքով տրամադրված բոլոր հողերը՝ 5 տարի ժամկետով,
- բ. ծառայողական օգտագործման տրված պատմամշակութային նշանակության հողերը,
- գ. *դպրոցին կից ուսումնարտադրական և փորձարարական հողամասերը,*
- դ. ճիշտ պատասխանը նշված չէ:
3. Նոր հատկացված հողամասի հարկման վերաբերյալ հաշվարկները ներկայացվում են.
- ա. *հողօգտագործման իրավունքի ձեռքբերման պահից սկսած մեկ ամսվա ընթացքում,*
- բ. հողօգտագործման իրավունքի ձեռքբերման ամսվան հաջորդող ամսվա մինչև 15-ը,
- գ. հողօգտագործման իրավունքի ձեռքբերման ամսվան հաջորդող ամսվա մինչև 25-ը,
4. Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկը սահմանվում է.
- ա. գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների համար՝ կադաստրային շրջանցման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի 0.5 %-ի չափով՝ եթե գտնվում է բնակավայրից դուրս,
- բ. անտառային ֆոնդի հողերի համար (բացառությամբ դրանցում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի) կադաստրային շրջանցման գոտիների անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման միջին արժեքի 1 %-ի չափով,
- գ. *«ա» և «բ» կետերում նշվածները,*
- դ. ճիշտ պատասխանը նշված չէ:
5. Վարձակալության պայմաններով օգտագործման տրամադրված հողերի համար հողի հարկը գանձվում է՝
- ա. *վարձատուից,*
- բ. վարձակալից,
- գ. պետական պահուստաֆոնդի հողերի վարձակալության դեպքում՝ վարձատուից,
- դ. «ա» և «գ» կետերում նշվածները:
6. Տնամերձ հողամասերի համար հարկի դրույթաչափը սահմանվում է.
- ա. *կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 10% չափով,*
- բ. կադաստրային գնահատման արժեքի 0.5-1%-ի չափով,
- գ. կադաստրային գնահատման արժեքի 15%-ի չափով,
- դ. ճիշտ պատասխանը նշված չէ:
7. Հողի հարկ վճարողներ են հանդիսանում.

- ա. հողի սեփականատերերը.  
 բ. պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները.  
 գ. «ա» և «բ» կետերում նշվածները.
8. Անտառային ֆոնդի հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է .  
 ա. կադաստրային շրջանցման գոտիների անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման միջին արժեքի 1%-ի չափով,  
 բ. կադաստրային գնահատման արժեքի 0.5-1 %-ի չափով,  
 գ. կադաստրային զուտ եկամտի 10 %-ի չափով:
9. Հաշվարկված հողի հարկի գումարները քաղաքացիները պետական բյուջե են վճարում ոչ ուշ, քան.  
 ա. մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը և մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը՝ հավասար մասերով,  
 բ. եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ ամբողջությամբ,  
 գ. Մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 30-ը:
10. Իրավաբանական անձինք հաշվարկված հողի հարկի գումարները բյուջե են վճարում.  
 ա. եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը,  
 բ. եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը,  
 գ. հավասար մասերով, ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը և հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը:
11. Հողի հարկից 100% չափով ազատվում են.  
 ա. պետական արգելանոցները և արգելավայրերը,  
 բ. հողային ռեֆորմի ընթացքում սեփականաշնորհված հողատեսքերի սեփականատերերը,  
 գ. գյուղատնտեսական անտառտնտեսական գիտական կազմակերպությունները, որոնք հողերը օգտագործում են բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով,  
 դ. «ա» և «գ» կետերում նշվածները:
12. Բնակավայրերից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանված է.  
 ա. կադաստրային գնահատման արժեքի 0.5%-ի չափով  
 բ. կադաստրային գնահատման արժեքի 10%-ի չափով  
 գ. կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 0.5 %-ի չափով



*դ. կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամտի 10 %-ի չափով:*

13. Հողի հարկից 50 % չափով ազատվում են.
- ա. բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն),
  - բ. մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին և դպրոցներին կից ուսումնաարտադրական և փորձարարական հողամասերը,
  - գ. *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտահարկի վճարումից ազատված քաղաքացիները՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերի համար,*
  - դ. ճիշտ պատասխանը նշված չէ:
14. Գյուղատնտեսական նշանակության հողերի հողի հարկով հարկման ենթակա մակերեսների մեջ չեն մտնում.
- ա. շենքերի և շինությունների պահպանման համար անհրաժեշտ տարածքները,
  - բ. օբյեկտների սանիտարապահական, տեխնիկական գոտիները,
  - գ. բնակավայրերում բնակշինության համար հատկացված հողամասերը,
  - դ. *ճիշտ պատասխանը նշված չէ:*
15. Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի վճարման գծով արտոնություն ստացող իրավաբանական անձանց հարկի վճարումից ազատման պահիլ.
- ա. արտոնության իրավունքի ծագմանը հաջորդող ամիսը,
  - բ. *արտոնություն իրավունքի ծագման ամիսը,*
  - գ. արտոնության իրավունքի ծագման եռամսյակը,
  - դ. արտոնության իրավունքի ծագման հաջորդող եռամսյակը:
16. Որ մակարդակի բյուջե է մուտքագրվում համայնքների վարչական տարածքներում գտնվող գույքի համար ֆիզիկական անձանց գույքահարկի գումարը.
- ա. անբողջությամբ պետական բյուջե,
  - բ. *անբողջությամբ համայնքային բյուջե,*
  - գ. բաշխվում է 95/5 համամասնությամբ ֆիզիկական անձանց գրանցման վայրի համայնքի բյուջեի և պետական բյուջեի միջև,
  - դ. բաշխվում է 85/15 համամասնությամբ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջեի և պետական բյուջեի միջև:
17. Փոխադրամիջոցի գույքահարկով հարկվող օբյեկտը.
- ա. փոխադրամիջոցի արժեքը,
  - բ. փոխադրամիջոցը,
  - գ. *փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը:*
18. Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում բաժնետիրոջ շինության գույքահարկի հաշվարկման կարգը.

- ա. յուրաքանչյուր բաժնետիրոջ համար՝ հաշվարկվում է ըստ իր բաժնենասի հարկման բազայի և գույքահարկի համապատասխան դրույքաչափի,  
 բ. *հաշվարկվում է ամբողջ շինության գույքահարկը և բաշխվում յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժնենասին համանասնորեն,*  
 գ. բաժնետերերի հայեցողությամբ:
19. Կազմակերպությունների փոխադրամիջոցների տարեկան գույքահարկի վճարման ժամկետը.  
 ա. հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 25-ը ներառյալ,  
 բ. տեխնիկական զննության ժամանակ,  
 գ. հաշվարկները ներկայացնելու համար սահմանված ժամկետին հաջորդող 5 օրյա ժամկետում,  
 դ. *յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ:*
20. Հարկատու համարվող ֆիզիկական անձանց պատկանող առանձին կանգնած ավտոտնակների համար գույքահարկի դրույքաչափը.  
 ա. 0.2%,  
 բ. 10.0 հազ. դրամ,  
 գ. մինչև 3 մլն. դրամը 0 %, 3 մլն. դրամից ավելին՝ համաձայն օրենքով սահմանված սանդղակի:
21. Հասարակական նշանակության քարե շինությունների գույքահարկի դրույքաչափերը.  
 ա. 100000 դրամ,  
 բ. 30000 դրամ,  
 գ. *հարկման բազայի 0.3 %*
22. Հասարակական և արտադրական նշանակության շինությունների գնահատման կարգը սահմանվում է.  
 ա. *օրենքով,*  
 բ. կառավարության որոշմամբ,  
 գ. անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պետի հրամանով,  
 դ. հարկային մարմնի ղեկավարի հրամանով:
23. Գույքահարկի գծով արտոնություններ կարող են սահմանվել.  
 ա. ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ,  
 բ. օրենքով,  
 գ. համայնքի ավագանու որոշումներով,  
 դ. *«բ» և «գ» կետերով նշվածները:*
24. Գույքահարկից ազատվում են.  
 ա. ժամանակավոր տնակները,

- բ. 20 տարվա վաղեմությամբ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները,  
 գ. 3-րդ կարգի վնասվածություն ունեցող շինությունները,  
 դ. ծիշտ պատասխանը նշված չէ:
25. Գույքահարկ վճարող համարվողները.  
 ա. միջազգային կազմակերպությունները,  
 բ. հիմնարկները,  
 գ. տեղական ինքնակառավարման մարմինները,  
 դ. «ա» և «բ» կետերում նշվածները:
26. Կազմակերպությունների գույքահարկի հաշվարկների ներկայացման ժամկետը.  
 ա. մինչև հաշվետու տարվա սեպտեմբերի 1-ը ներառյալ,  
 բ. մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ,  
 գ. մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ,  
 դ. մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ:
27. Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի վճարման գծով արտոնությունը դադարելու դեպքում հարկը երբ է հաշվարկվում.  
 ա. այն ամսից, երբ դադարել է արտոնությունը,  
 բ. արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից,  
 գ. այն եռամսյակից, երբ դադարել է արտոնությունը,  
 դ. արտոնության իրավունքը դադարելու եռամսյակին հաջորդող եռամսյակից:
28. Վարձակալության պայմաններով օգտագործման տրամադրված գույքի համար գույքահարկը ումից է գանձվում.  
 ա. վարձատուից,  
 բ. վարձակալից,  
 գ. վարձատուից և վարձակալից՝ հավասար չափերով:
29. Շինությունների համար գույքահարկի հարկման բազա է համարվում  
 ա. շինության կադաստրային արժեքը,  
 բ. շինության շուկայական արժեքը,  
 գ. շինության սկզբնական արժեքը:

## Խնդիրներ

1. Հարկատուի տարվա համախառն եկամուտը կազմել է 150 000.0 հազ. դրամ, ծախսերը 140 000.0 հազ. դրամ, այդ թվում հավասար չափով վարձատրվող վարձու տասը աշխատողներին

տրված աշխատավարձը 30 000.0 հազ. դրամ, հատուկ սննդի համար ծախսերը 2500.0 հազ դրամ.

Պահանջվում է որոշել շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա գումարը:

2. Կազմակերպության 2006թ. համախառն եկամուտը կազմել է 6000.0 հազ. դրամ, անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ 4670.0 հազ դրամ, այդ թվում հաշմանդամներին վճարված աշխատավարձ350.0 հազ. դրամ, պարզևատրման գումար՝ 60.0 հազ. դրամ:

Պահանջվում է որոշել 2006թ. համար կազմակերպության կողմից բյուջե վճարվելիք շահութահարկի գումարը:

3. Հարկատուի համախառն եկամուտը կազմել է 26000.0 հազ. դրամ (առանց նվազեցվող եկամուտների), այդ թվում անհատույց ստացված դրամական միջոցներ 1000.0 հազ. դրամ, սարքավորումներ՝ 1500.0 հազ. դրամ, նվազեցումները կազմել են 19000.0 հազ. դրամ, այդ թվում անհատույց ստացված սարքավորման ծախսերը 600.0 հազ. դրամ, նվազեցման ենթակա եկամուտների հետ կապված ծախսերը 700.0 հազ. դրամ:

Պահանջվում է որոշել հարկվող շահույթը և շահութահարկի գումարը:

4. Հարկատուի մաշվածքի ենթակա շենքի սկզբնական արժեքը առ 01.01.05թ. (ծառայության երկրորդ տարի) կազմել է 20 000.0 հազ. դրամ: Հունիսի 10-ին շահագործման է հանձնվել հարկ վճարողի կողմից վեց տարի առաջ ձեռքբերված և պահեստում գտնվող 3000.0 հազ. դրամ արժողությամբ ավտոմեքենան:

Պահանջվում է որոշել շահութահարկի հաշվարկման նպատակով նշված հիմնական միջոցների գծով 2005թ. նվազեցման ենթակա ծախսերը, եթե դրանց ձեռք բերումը հիմնավորված է փաստաթղթերով:

5. Կազմակերպությունը 2003թ. արտադրել է 2000 հատ հեռախոս, որի համար կատարել հետևյալ ծախսերը՝ հումքի և նյութերի ձեռք բերում 20000.0 հազ. դրամ, աշխատանքի վարձատրություն և դրանց գծով պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ 35600.0 հազ. դրամ, հաշվարկվել է արտադրությունում օտագործվող հիմնական միջոցների մաշվածություն 10000.0 հազ. դրամ, արագամաշ առարկաների գծով 1500.0 հազ. դրամ: Նույն տարվա ընթացքում կազմակերպությունը այդ հեռախոսներից վաճառել է 1600 հատը, յուրաքանչյուրը 80 հազար դրամով:

Պահանջվում է որոշել հարկվող շահույթը և շահութահարկի գումարը(առանց հաշվի առնելու անուղղակի հարկերը):

6. Կազմակերպությունը տարվա ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացել է 5000.0 հազ. դրամ եկամուտ, իսկ հիմնական միջոցների վաճառքից 5400.0 հազ. դրամ եկամուտ: Գյուղատնտեսության գծով ծախսերը կազմել են 4000.0 հազ. դրամ, իսկ հիմնական միջոցների մնացորդային արժեքը կազմում է 1400.0 հազ. դրամ:

Պահանջվում է որոշել

1. տվյալ դեպում կազմակերպությունը հանդիսանում է շահութահարկ վճարող թե ոչ,
2. եթե այո, ապա որքան կկազմի վճարվելիք շահութահարկի գումարը:

7. Կազմակերպությունը 2005թ. ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացել է 50000.0 հազ. դրամ եկամուտ, իսկ հիմնական միջոցների վաճառքից 6500.0 հազ. դրամ եկամուտ: Գյուղատնտեսության գծով ծախսերը կազմել են 40000.0 հազ. դրամ, իսկ հիմնական միջոցների մնացորդային արժեքը կազմում է 1400.0 հազ. դրամ: Պահանջվում է որոշել.

- 1.տվյալ դեպում կազմակերպությունը հանդիսանում է շահութահարկ վճարող թե ոչ,
- 2.եթե այո, ապա որքան կկազմի վճարվելիք շահութահարկի գումարը:

8. Կազմակերպությունը 2003թ. ընթացքում մատուցված կենցաղային տեխնիկայի նորոգման և սպասարկման ծառայությունների համար կատարել է հետևյալ ծախսերը`

- 15000.0 հազ. դրամ հումք և նյութեր,
- 25600.0 հազ. դրամ աշխատանքի վարձատրություն,
- 9400.0 հազ.դրամ օգտագործվող հիմնական միջոցների մաշվածություն,
- 1000.0 հազ դրամ արագամաշ առարկաների գծով:

Մատուցված ծառայությունների դիմաց կազմակերպությունը ստացել է 62400.0 հազ. դրամ եկամուտ:

Պահանջվում է որոշել հարկվող շահույթը և շահութահարկի գումարը:

9. Բնակելի շինության կադաստրային արժեքը 18000.0 հազ. դրամ է: Գույքահարկի տարեկան գումարը կազմում է 23.1 հազ. դրամ: Շինությունը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է երկու անձանց` 60 և 40 տոկոս համամասնությամբ:

Պահանջվում է որոշել յուրաքանչյուր բաժնետիրոջ կողմից վճարվելիք գույքահարկի տարեկան գումարը:

10. Հաշվարկել մինչև 10 նստատեղ ունեցող (մարդատար) տրանսպորտային միջոցի 2005թ. գույքահարկի տարեկան գումարը, եթե վերջինիս քաշող շարժիչի հզորությունը 190 ձիաուժ է, թողարկման տարեթիվը՝ 1996թ. հունվար ամիս:

11. Կազմակերպությունը 2004թ. մայիսի 10-ին սեփականության իրավունքով ձեռք է բերում 5 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողամաս (մեկ հեկտարի կադաստրային զուտ եկամուտը 1000.0հազ. դրամ), որից 0.5 հեկտարը օգտագործում է խաղողի տնկարկների հիմնման, իսկ 4.5 հեկտարը՝ ցորենի ցանքսի համար:

Հաշվարկել կազմակերպության 2004թ. հողի հարկի գումարը:

12 Կազմակերպության վարձու աշխատողը 2005թ. հունիսին դրմել է տնօրինությանը իր աշխատավարձից 20.0 հազ. դրամ Հայաստան համահայկական հիմնադրամին, 10.0հազ. դրամ բարձրագույն ուսումնական հաստատությանը (ուսանողական գարուն կազմակերպելու համար) փոխանցելու խնդրանքով:

Որոշել վարձու աշխատողի համար համախառն եկամտից 2005թ. հունիս ամսվա համար հաշվարկվելիք եկամտահարկը, եթե ամսվա հաշվարկված աշխատավարձը կազմել է 100.0հազ. դրամ, պարգևատրման գումարը՝ 50.0հազ. դրամ:

13. ՀՀ քաղաքացին որպես անհատ ձեռնարկատեր 2004թ. ընթացքում իրացված ապրանքների դիմաց ստացել է 8000.0հազ. դրամ եկամուտ, որի գծով կատարել է անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված 6000.հազ. դրամի ծախս:

Որոշել քղաքացու կողմից 2004թ. բյուջե վճարվելիք եկամտահարկի գումարը:

14. 2005թ. հունվար ամսին կազմակերպությունը իր չորս աշխատողներին հաշվարկել է աշխատավարձ, համապատասխանաբար՝ 50.0հազ., 80.0հազ., 130.0հազ., 180.0 հազ. դրամ (չորս աշխատողներն ել աշխատել են 21 օր):

Հաշվել յուրաքանչյուր աշխատողի գծով եկամտահարկի գումարը և նշել բյուջե փոխանցման ժամկետը:

15. Հարկատուի մաշվածքի ենթակա շենքի սկզբնական արժեքը առ. 01.01.04. (ծառայության երրորդ տարի) կազմել է 30 000.0 հազ. դրամ: Հունիսի 10-ին շահագործման է հանձնվել հարկ

վճարողի կողմից հինգ տարի առաջ ձեռքբերված և պահեստում գտնվող 2000.0 հազ. դրամ սկզբնական արժեքով ավտոմեքենան:

Պահանջվում է որոշել շահութահարկի հաշվարկման նպատակով նշված հիմնական միջոցների գծով 2004թ. նվազեցման ենթակա ծախսերը, եթե դրանց ձեռքբերումը հիմնավորված է փաստաթղթերով:

16. Կազմակերպությունը 2005թ. իրականացրել է արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն՝ վճարելով 330.0 հազ. դրամ հաստատագրված վճար:

Որոշել կազմակերպության կողմից 2005թ. համար հաշվարկվելիք շահութահարկի գումարը, եթե տարվա ընթացքում նրա համախառն եկամուտը կազմել է 13000.0 դրամ, այդ թվում՝ նոյեմբերի 4-ից հետո ստացված համախառն եկամուտը 2500.0 հազ. դրամ, փաստաթղթերով հիմնավորված և անհրաժեշտ ծախսերը՝ 9675.0 հազ. դրամ, այդ թվում՝ նոյեմբերի 4-ից հետո կատարված ծախսերը՝ 2120.0 հազ. դրամ:

17. Ֆիզիկական անձի 2004թ. հունվար ամսվա համախառն եկամուտը կազմում է 1800.0 հազ. դրամ, այդ թվում աշխատավարձ 1380.0 հազ. դրամ, ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված փոխհատուցումներ 220.0 հազ. դրամ, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վճարումներ 200.0 հազ. դրամ:

Որոշել վճարման ենթակա եկամտահարկի ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գումարները:

18. Օշական գյուղի բնակիչը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողակտորի վրա 2005թ. աճեցրել է խաղող, որի իրացումից ստացել է 1500.0 հազար դրամ եկամուտ:

Որոշել 2005թ. նրա կողմից բյուջե հաշվարկվելիք եկամտահարկի գումարը, եթե նույն տարում սեփական գյուղտեխնիկայի վարձակալությունից ստացած եկամուտը կազմել է 100.0 հազ դրամ:

19. Քաղաքացին 2005թ. սեպտեմբերին սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենան և բնակարանը իրացրել է ՀՀ-ում գրանցված կազմակերպությանը՝ համապատասխանաբար 4000.0 հազ. դրամով և 8000.0 հազ. դրամով:

Պահանջվում է որոշել կազմակերպության կողմից վճարված եկամտից պահված եկամտահարկի գումարը

20. Անհատ ձեռնարկատերը 2005թ. հաշվարկել և բյուջե է վճարել եկամտահարկ 105.0 հազ. դրամ, այդ թվան վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից՝ 65.0 հազ. դրամ:

Պահանջվում է որոշել՝ 2006թ հանդիսանում է նա եկամտահարկի կանխավճար վճարող և էթե այո, ինչքան կկազմի կանխավճարի գումարը:

21. ՀՀ քաղաքացին որպես անհատ ձեռնարկատեր 2005թ. ընթացքում իրացված ապրանքների դիմաց ստացել է 7800.0 հազ. դրամ եկամուտ, որի գծով կատարել է անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսեր 6400.0 հազ. դրամի չափով:

Որոշել 2005թ. համար քաղաքացու կողմից բյուջե վճարվելիք եկամտահարկի գումարը, էթե նա 1-ին կարգի հաշմանդամ է և տարվա ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրից ստացել է եկամուտ (4 ամսվա համար) 35.0 հազ. դրամ:

22. Քաղաքացի Պողոսյանը 2005թ. մարտի 20-ին սեփականության իրավունքով իրեն պատկանող 5000.0 հազ. դրամ կադաստրային արժեքով հասարակական շինությունն օտարում է քաղաքացի Օհանյանին:

Հաշվարկել նշված շինության գծով Պողոսյանի և Օհանյանի 2005թ. գույքահարկի գումարները, էթե գույքահարկի գծով հարկային արտոնություններ չեն գործում:

23. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանում է արտադրամաս, որի սկզբնական (ձեռքբերման) արժեքը կազմում է 15000.0 հազ. դրամ, իսկ մնացորդային (հաշվարկային) արժեքը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 2500.0 հազ. դրամ:

Հաշվարկել նշված հարկվող օբյեկտի գծով 2004թ. գույքահարկի գումարը:

24. Քաղաքացին գրանցված է էջմիածին քաղաքում, սակայն փաստացի բնակվում է Արտաշատ քաղաքում:

Պահանջվում է որոշել, որ համայնքի բյուջե պետք է մուտքագրվի քաղաքացուն պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի, բնակելի տան և սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող մեկ հեկտար հողամասի 2006թ. գույքահարկի գումարները:



25. Պահանջվում է հաշվել բազմաբնակարան բնակելի շենքում գտնվող բնակարանի կադաստրային արժեքը և վճարվելիք գույքահարկի գումարը, եթե հայտնի են հետևյալ տվյալները.

- բնակարանի ընդհանուր մակերեսը 120մ<sup>2</sup>,
- բնակարանը գտնվում է Երևան քաղաքում և նրա նկատմամբ սահմանված է առավելագույն գործակից՝ 1.0
- 1մ<sup>2</sup>-ի արժեքը 255.000դրամ է,
- բնակարանի ծածկը երկաթբետոնյա է,
- բարձրությունը (ներքին չափերով) 3.3 մետր է,
- բնակարանը գտնվում է 5-րդ հարկում,
- շինության վնասվածության աստիճանը 0 կարգի է,
- շինության շահագործման տևողությունը 17 տարի,
- բնակարանի ավարտվածության աստիճանը՝ 100 տոկոս:

26. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 3000մ<sup>2</sup> տնամերձ հողամասից 150մ<sup>2</sup> զբաղեցնում է նրան պատկանող բնակելի տունը, 50 մ<sup>2</sup> կից շինությունը: Տվյալ տարածաշրջանում հողի կադաստրային գնահատմամբ գուտ եկամուտը մեկ հեկտարի համար կազմում է 150.000 դրամ:

Ըրոշել.

1. թե, քաղաքացին հողամասի որ չափի գշով է հանդիսանում հողի հարկ վճարող և որքան կկազմի հարկի գումարը,
2. քաղաքացուն պատկանող բնակելի շինության գույքահարկի գումարը, եթե կադաստրային ար-եքը կազմում է 38.500.0 հազ. դրամ:

## Օգտագործված գրականության ցանկ

### Օրենքներ

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը (14.04.1997թ.),
2. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը (30.09.1997թ.),
3. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը (27.12.1997թ.),
4. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը (28.12.2002թ.),
5. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը (27.04.1997թ.),

### Մասնագիտական գրքեր և հոդվածներ

1. Ավետիսյան Ի.Ա. «Տնտեսվարման ֆինանսավարկային համակարգը», Տնտեսագտ, Երևան 1993թ.
2. Ալավերդյան Յու.Դ., Ավետիսյան Ի.Ա., «ՀՀ ֆինանսավարկային համակարգը», Հայաստան 1996թ.
3. Ալավերդյան Յու.Դ. «ՀՀ բյուջետային համակարգը», Տնտեսագտ, Երևան 2003թ.
4. Բադանյան Լ. և ուրիշներ «Ֆինանսներ և վարկ» Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ձանգակ-97», 2003թ.
5. Բաղդասարյան Վ.Գ., «Ուղղակի հարկերը և դրանց ազդեցությունը արտադրության խթանման վրա (ՀՀ օրինակով)», Սեղմագիր տ.գ.թ. գիտական աստիճանի հայցման համար, ԵՊՏԻ, Երևան 2003թ.
6. Կիրակոսյան Գ. «Հարկաբյուջետային քաղաքականության զարգացման հեռանկարները ՀՀ-ում», Երևան 2000թ.
7. Հարությունյան Վ. «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման ուղիները», Երևան, «Ձանգակ-97», 2003թ.
8. Հարկային և պարտադիր այլ վճարների հարաբերությունների հետ կապված Պարզեցված ուղեցույց, N1-5, Երևան 2001թ.
9. Налоги. Учебное пособие, под ред. Д.Г.Черника, М., <Финансы и статистика>

10. Юткина Т.Ф. <Налоги и налогообложение> Учебник, М., ИНФРА-М, 2000г.
11. Ридарко Д. Начало политэкономии и налогового обложения. Т.1, М.: Политиздат, 1955
12. Смит А. Исследование о природе и причинах богатства народов. М.: ОГИЗ Соцэкгиз, 1935, т. 2.
13. Маркс К., Энгельс Ф. Сочинения, 2-е издание, т. 7.
14. Кейнс Дж. Общая теория занятости, процента и денег. М.: Прогресс, 1978.
15. Пушкарева В. История финансовой мысли и политика налогов. М.: 1996 ст.74
16. Усоскин В. Теории денег. М., 1976, глава 3.
17. Тургенев Н. И. Опыт теории налогов, М.: 1937
18. Федосов В.М. Современный капитализм и налоги. 1987, ст.107
19. Brennan G. Public Finance Theory. [www.econlib.org](http://www.econlib.org). paragraph (III,VII.13-III, VII.19).